

13 900


ԱՆԴՐ. ՖԻՆԺՈՂԿՈՄԱՏԻՆ

— Կ Ի 8 —

ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ
ՀԵՌԱԿԱ ՖԻՆԱՆՍԱ-ՏՆՏԵ-
ՍԱԳԻՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

„ԶԱԿԶԻՓԵՆ“

ՀԱՅԵՍՏԱՆԻ ԲԱԺԵՆԹՈՒՆՔ



ԶԱԿԶԻՖԵՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԲԱԺԱՆԹՈՒՆՔԻ
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ԹԻՖԼԻՍ

1935

Դ. Վ. ՍՍՎԻՆՍԿԻ

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՍՏԱՏԻՍՏԻԿԱ

ՄԱՍՆ I

3/3

4-23

Տպագրւած և		Պետք և կարգալ
Յերես	6 տող 10 վերեւից տարբերայնությունն և	տարբերայնությունն և
»	7 » 18 » հանգստացնել	հանգստացվեն
»	7 » 22 » խորացնելին	խորանային
»	9 » 12 ներք. ընդգրկում	ընդգրկվում
»	9 » 9 » մզոդ	մզվող
»	10 » 3 » այն աշխատանքներին	աշխատանքներին
»	13 » 9 վերեւից ու վերջնական	վերջնական
»	14 » 5 » գործնական	գործառնական
»	19 » 9 վերեւից կցվածքից	կցորդից
»	21 » 7 ներք. հզորությունը	կարողությունը
»	26 » 6 » յեղակի	առանձնակի
»	27 » 17 վերեւից չեն	չենք
»	27 » 4 ներք. վորակական բազմառե- սակության	վորակական կարգի
»	38 » 3 վերեւից ուղղակի և տեղական (լուկալ)	անմիջական և ինքնուրույն
»	38 » 21 ներք. որդանները,	որդաններին
»	42 » 9 վերեւից վրա, կանգ	վրա, կանգ
»	43 » 7 ներք. տեխնիքական անդամի	տեխնիքական ինքնուրույն
»	44 » 13 վերեւից արտադրության	արտադրական
»	44 » 4 ներք. ցեխերին	ցեխերը
»	47 » 22 վերեւից լուծման	վորոշման
»	47 » 1 ներք. ձեռնարկությանը	ձեռնարկությունը
»	47 » 4 » գլավկլիններին	գլավկլիններին
»	51 » 16 վերեւից հիմնված և	վոր հիմնված և
»	51 » 17 » և ճանաչողական	ճանաչողական
»	51 » 18 ներք. այն ինչ	այն, ինչ
»	58 » 14 վերեւից ինչպես պլանային այն- պես եւ ստատիստիկական	(ինչպես պլանային, այնպես եւ ստատիստիկական)
»	58 » 15 » և թույլ և տալիս համեմա- տել	վորը թույլ և տալիս համեմա- մատել տվյալները
»	58 » 4 ներք. կանգնեցնում և	սահմանափակում են
»	58 » 14 » Այդ կլասիֆիկացիոն ինֆ- լիացիայի միակ միութարու- թյունն ու խարխուր	Այդ կլասիֆիկացիոն ինֆ- լիացիայից փրկվելու միակ հույսն ու միութարությունը
»	59 » 13 վերեւից և տնտեսական	տնտեսական
»	60 » արդյունաբերության անվանակարգի մեջ, 17-րդ խմբից հե- տո բաց և ողնված՝ «գյուղատնտեսական մեքենաների և գործիքների արտադրություն» խումբը	տնտեսական
»	60 » 1 ներք. Հիմքային	Հիմնական
»	67 » 19 » տիրապետման	պատկանելության
»	68 » 10 վերեւից առաջին	առանձին
»	68 » 2 ներք. 98	99
»	69 » 20 » սահմանները	սահմաններ
»	72 » 2 վերեւից բաժով (ակցիզով)	ակցիզով
»	72 » 6 » դաբադող	դաբադելու
»	73 » 12 ներք. գիֆերենցիայի	գիֆերենցիայի

Մանրություն. — Տեքստի և ծանոթություններին մեջ յեղած մատնա-
շումները արված են ըստ ուսերեն հրատարակություն
ներին:

21108

313

1-23

Դ. Վ. ՍԱՎԻՆՍԿԻ

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՄՏԱՏԻՄՏԻԿԱ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I. Արդյունաբերական ստատիստիկայի առարկան ու խնդիրները

«Արդյունաբերական ստատիստիկա» հասկացողության բնորոշումը	3
Արդյունաբերական ստատիստիկայի խնդիրները սոցիալիստական շինարարության պայմաններում	5
Արդյունաբերական ստատիստիկայի աշխատանքները հաջող ընթացքով պայմանները	11
Արդյունաբերական ստատիստիկայի փոխարարներությունը արդյունաբերական հաշվապահության և կալիուլյացիայի հետ	12
Միասնական սոցիալիստական հաշվառման պրոբլեմը	15
Ժողովրդատնտեսական հաշվառքի ցուցանիշները սխտեմը՝ արդյունաբերական ստատիստիկայի մեջ և մեր վարչակարգի սխտեմը	18
Մեթոդական ցուցումներ 1-ին գլխի համար	24
Ստուգիչ հարցեր առաջին գլխի համար	26

II. Պիւման միավորն արդյունաբերական վիճակագրության մեջ

Պիւման միավորը հարցի ելույթումն ու նշանակությունը	26
Պիւման նշանակությունը միավորներն արդյունաբերական ստատիստիկայի մեջ	28
Ընարված դիտման միավորը ճշգրտ վերադրու անհրաժեշտությունը	30
Արտադրական ձեռնարկության և նրա հատկանիշների հասկացողության բնորոշումը խորհրդային արդյունաբերական ստատիստիկայի առաջին տարիների պրակտիկայում	32
Արտադրական ձեռնարկություն հասկացողության բնորոշումը՝ մասնական կերպ ստատիստիկայի և պլանային պրակտիկայում	34
Արտադրական ձեռնարկության տիպերն ըստ բարդության ստիճանի	39
Ցեխը վերադրու դիտման միավոր	43
Ցեխերի բազմատեսակությունն ըստ արտադրական ձեռնարկությունում նրանց ունեցած դերի	44
Գործող, չգործող և կոնսերվացված ձեռնարկություններ	45
Հետևություններ	47
Մեթոդական ցուցումներ 2-րդ գլխի համար	48
Ստուգիչ հարցեր 2-րդ գլխի համար	49

III. Ձեռնարկությունների կլասիֆիկացիան ըստ արդյունաբերության ձյուղերի

կլասիֆիկացիան վերադրու խմբավորման տեսակներից մեկը	50
կլասիֆիկացիայի խնդիրներն ու նշանակությունը	51
կլասիֆիկացիայի կառուցման կախումը ճանաչողության խնդիրները կոնկրետ բովանդակությունից	53
Արդյունաբերության ճյուղային կլասիֆիկացիան	54
Արդյունաբերության ճյուղերը, արդյունաբերության ճյուղերի անվանակարգությունը (նոմենկլատուրան)	56
Ճյուղային կլասիֆիկացիայի հետ կապված կարևորագույն հարցերը	63
Արդյունաբերության ճյուղերի միացումն այսպես կոչված «Ա» և «Բ» խմբերում	64
Արդյունաբերությունում «Ա» և «Բ» խմբերի ստորաբաժանները պայմանականորեն	65
Արդյունաբերության կլասիֆիկացիայի այլ հնարավոր տեսակները	67
Այսպես կոչված քանակական և որակական ցուցանիշների մեթոդի կիրառումն արդյունաբերական ստատիստիկայում	68
Արդյունաբերական ցուցանիշների նշանակությունը	70
Մեթոդական ցուցումներ 3-րդ գլխի համար	74
Ստուգիչ հարցեր 3-րդ գլխի համար	75

Գլուխ I

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՍՏԱՏԻՍՏԻԿԱՅԻ ԱՌԱՐԿԱՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

«ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՍՏԱՏԻՍՏԻԿԱ» ՀԱՍԿԱՅՈՂՈՒԹՅԱՆ ԲՆՈՐՈՇՈՒՄԸ

Ձեռնարկ տեսակետից արդյունաբերական ստատիստիկան (յեթև խոսենք նրա մասին վերադրու մի պրակտիկ գործունեություն, վերադրու պրակտիկ են վերադրու ողջաններ և առանձին անձինք) կարելի յե բնորոշել վերադրու մի աշխատանք, վերադրու արվում ե արդյունաբերության մեջ տեղի ունեցող այս կամ այն յերևույթներն ու պրոցեսներն ուսումնասիրելու համար: Այդ ուսումնասիրությունը կատարվում ե յուրահատուկ ձևերի ու յեղանակների ոգնությունը, վերոնց հանրագումարը կոչվում ե ստատիստիկական մեթոդ: Արդյունաբերական ստատիստիկան, վերադրու թեորետիկ (տեսական) առարկա (յեթև նորից սահմանափակվենք զուտ ձևական բնորոշումով) կարելի յե բնորոշել իբրև մի գիտություն, վերադրու շարադրում և հիմնավորում ե արդյունաբերության մեջ տեղի ունեցող յերևույթների ու պրոցեսների ստատիստիկական ուսումնասիրության յեղանակները:

Մենք, ի հարկե, չենք կարող սահմանափակվել արդյունաբերական ստատիստիկայի վերոհիշյալ ձևական բնորոշումով: Սակայն, նախ քան այդ բնորոշմանն այս կամ այն կոնկրետ բովանդակություն տալը, պարզենք վերը բերած բնորոշումների մի քանի մանրամասնությունները: Յուրաքանչյուր ստատիստիկական աշխատանքի բնորոշումն անհատականությունը կայանում ե.—

Նախ՝ ստատիստիկական յեղանակով ուսումնասիրվող ողյեկտում և Յերկուրդ՝ այն յեղանակներում, վերոնց ոգնությունը իրականացվում ե այդ ուսումնասիրությունը:

Յուրաքանչյուր ստատիստիկական հետազոտության ողյեկտներ են հոնդիսանում, այսպես կոչված, ստատիստիկական հանրագումարները: Ստատիստիկական հանրագումարները ընդունված ե կոչել վերադրու միատարր, բայց ինդիվիդուալ կերպով վերցրած տարբեր ողյեկտների (առարկաների, յերևույթների, փաստերի) ճշգրիտ սահմանադրված խումբը:

Ողյեկտների հանրագումարներն ուսումնասիրելիս, ստատիստիկան ողտվում ե առանձնահատուկ ճանաչողական յեղանակներով, այսպես կոչված՝ «ամբողջականություն» և «ամբողջականություն» և «ամբողջականություն»:

«Ամփոփիչ հասկանիշներ» ասելով հասկացվում են այնպիսի հասկանիշներ, վորոնք ընդհանրացնում են հանրագումարի մեջ մտնող առանձին որչեկանների բազմադիսի հասկալթյունները և միջին ու հարաբերական մեծությունները ձևով (բանվորների միջին աշխատավարձը, զանազան պրոֆեսիայի բանվորների տոկոսային հարաբերությունը բանվորների ընդհանուր թվի հետ և այլն) տալիս են վոյժ հանրագումարի բնութագրումը: «Ամփոփիչ կապակցություններ» ասելով հասկացվում և տվյալ յերևույթի հետ մի այլ յերևույթի ունեցած կապակցությունների այնպիսի բանաձևումը, վորն ընդհանրացնում և այդ կապակցության գրեթեման բազմապիսությունն՝ առանձին գեպքերում (աշխատանքի արտադրողականության կախվածությունը՝ պրոգրեսիվ գործավարձի կիրառումից և այլն): Այդ յուրահատուկ յեղանակների սխառմը, վոր կիրառվում և նրանց ամփոփիչ հասկալթյունները բնութագրելու ողնությամբ հանրագումարները նկարագրելու համար, կամ՝ այս կամ այն յերևույթից բացատրելու — նրանց մեջ յեղած ամփոփիչ կապերը սահմանելու միջոցով — հենց դա ևլ կազմում և, այսպես կոչված՝ ստատիստիկական մեթոդի եյությունը:

Մենք այստեղ չենք քննարկում կիրառվող այն յեղանակների մանրամասնությունները, վորոնցով ոգավում և ստատիստիկական մեթոդը. որտ ավարդաբանումն ու բացատրությունը կազմում և ստատիստիկական տեսության ընդհանուր դասընթացների խնդիրը *): Այստեղ պիտի նշենք, վոր հասարակական կյանքի յերևույթների մյուս բնագավառների կողքին, մենք ունենք նաև անտեսական յերևույթների այնպիսի բարդ վորտ, վորը հայտնի յե արդյունաբերություն անունով և վորը նույնպես կարող և ստատիստիկական ուսումնասիրության որչեկա ծառայել: Այստեղ նույնպես մենք հանդիպում ենք վորակապես միատարր և զրա հետ մեկահղ խնդիրիցուալ ձևով տարբեր որչեկանների, վորոնք կարող են վորպես ստատիստիկական հանրագումարներ դիտվել: Այստեղից ևլ առաջանում և ամփոփիչ մեծությունների միջոցով բազմազան յերևույթներ հանրագումարի բերելու անհրաժեշտությունը: Այստեղից ևլ բղխում և արդյունաբերության հաշվառման վորտում ստատիստիկական մեթոդի կիրառման անհրաժեշտությունը, վորի հետևանքով իր հերթին կյանքի յե կոչվում պրակտիկ գործունեյության այն հատուկ բնագավառը, վորը ծառայում և արդյունաբերության ստատիստիկայի ուսումնասիրության համար և կոչվում և արդյունաբերական ստատիստիկա:

Այստեղից նաև բղխում և հատուկ տեսական դիպրիպլինի գոյության անհրաժեշտությունը, մի դիպրիպլին, վորի խնդիրն և շարադրելու ու հիմնավորելու արդյունաբերության ստատիստիկայի ուսումնասիրության յեղանակները և կոչվում և արդյունաբերական ստատիստիկա:

*) Յենթադրվում է, վոր ուսանողներն արդեն մշակել են իմ «Ստատիստիկայի տեսության հիմունքները» դասընթացը: Մասն I և II, Հեռակա Ինստիտուտի հրատարակություն:

Արդյունաբերական ստատիստիկան (յեթե խոսելու լինենք նրա մասին վորպես պրակտիկ գործունեյություն) իր աշխատանքներում ոգաագործում և վերլուծության այն ընդհանուր յեղանակները, վորոնք ընդհանրապես, հատուկ են ստատիստիկական մեթոդին: Սակայն արդյունաբերությունը, վորպես անտեսական յերևույթների հատուկ վորտ, չափազանց բազմակողմանի յե ու բարդ և նրա յուրահատկություններն անբավարար են զարձնում ստատիստիկական աշխատանքների ձևերի մասին մեր այն ցուցումները, վոր մենք տվել ենք ստատիստիկայի բնղիմառ սխալքյան մեջ: Այստեղից ևլ առաջանում և մի շարք ստանձնահատուկ յեղանակների կիրառման անհրաժեշտությունը, վորոնցից մի քանիսը կարող են կիրառվել նաև անտեսական յերևույթների այլ հարակից բնագավառների ուսումնասիրության ժամանակ, իսկ մի քանիսը՝ բացառապես արդյունաբերության ուսումնասիրության ժամանակ: Դրանով ևլ պայմանավորվում և արդյունաբերական ստատիստիկայի, վորպես հատուկ տեսական դիպրիպլինի գոյությունը, վորն իր հերթին զարգացնում, մասնադիտացնում ու լրացնում և ստատիստիկական մեթոդի այն ընդհանուր հիմունքները, վորոնք շարադրվում են ստատիստիկական տեսության ընդհանուր դասընթացներում:

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՍՏԱՏԻՍՏԻԿԱՅԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Արդյունաբերական ստատիստիկան վորպես արդյունաբերական ուսումնասիրություն բնորոշելով, վոր ստատիստիկական մեթոդին հասուկ յեղանակների ոգնությամբ կատարում և արդյունաբերական ուսումնասիրություն, մենք նրան տվեցինք զուտ ձևական բնորոշում, վորը բոլորովին չի շշափում ու տալիս նրա բովանդակությունը, հետևաբար և անբավարար և:

Անցնելով արդյունաբերական ստատիստիկայի եյության պարզաբանմանը, մենք ամենից առաջ պիտի հավատենք, վոր արդյունաբերական ստատիստիկայի աշխատանքների կոնկրետ բովանդակությունը լիովին համերաշխում և այն խնդիրներին շրջանակին, յուրաքանչյուր տվյալ մոմենտում և կոնկրետ պարագաներում, վորոնք իրականացվում են արդյունաբերության բնագավառում:

Այստեղից ևլ հետևում և այն, վոր անկարելի յե բնորոշել արդյունաբերական ստատիստիկայի բովանդակությունը, կարվելով ու վերանալով ժամանակի կոնկրետ պայմաններից: Նամանավանդ անկարելի յե բնորոշել արդյունաբերական ստատիստիկայի կոնկրետ խնդիրները, յեթե կտրվենք այն սկզբունքային տարրերությունից, վոր գոյություն ունի մասնավոր կապիտալիստական և խորհրդ, սոցիալիստական արդյունաբերության միջև: Այլ խնդիրներ են դրված արդյունաբերական ստատիստիկայի առաջ մասնավոր-կապիտալիստական կարգերի պայմաններում և միանգամայն այլ խնդիրներ — խորհրդային իրականության պայմաններում: Ավելին, մեր սոցիալիստական շինարարության պայմաններում ժամանակի յուրաքանչյուր առանձին հատված, վորը ներկայացնում և ու-

ցիւղիստական կարգերի իրականացման ճանապարհին ընկած այս կամ այն ետապը, տնտեսական շինարարութեան բնագիտութեամբ, հրապարակի վրա յն դնում իր խնդիրները. դրանով իսկ կերպարանափոխվում են նաև արդյունաբերական ստատիստիկայի կոնկրետ խնդիրները:

Նախքան սոցիալիստական շինարարութեան պայմաններում արդյունաբերական ստատիստիկայի առաջ ծառացած խնդիրներին անցնելը, համառոտակի կանգ առնենք ստատիստիկայի դրութեան վրա՝ մասնավոր կապիտալիստական կարգերի պայմաններում: Մասնավոր կապիտալիստական տնտեսութեան հիմնական տարրերից դիժը՝ նրա տարրերայնութեանն է ի հակադրություն այն պլանայնության, վոր հասնել է սոցիալիստական տնտեսությանը: Այս հանգամանքն ինքնին կարծես թե պետք է նպաստեր ստատիստիկական աշխատանքների դարգացմանը, քանի վոր տարրերային պրոցեսների մեջ այս կամ այն որինաչափութեան հայտարարումն առանց ստատիստիկական մեթոդի ոգնութեան՝ անհնարին է: Սակայն անհրաժեշտութեան է զգացվում նշելու նաև յերկու մոմենտ, վորոնք հատուկ են մասնավոր կապիտալիստական կարգերին և վորոնք արգելակում են արդյունաբերական ստատիստիկայի աշխատանքների զարգացմանը բուրժուական պետութեան ներքին: Առաջին մոմենտն արդյունաբերական ձեռնարկությունների մասնավոր կապիտալիստական բնույթն է: Մյուս հետ կապված է, այսպես կոչված, առևտրական գաղտնիքի գոյութեանը, վորը մեծ նախանձախնդրութեամբ պահպանում ու թաղցնում է ձեռնարկութեանների կյանքի ու գործունեութեան վորոշ կողմերը:

Բուրժուակիայի և առանձնապես մանր բուրժուակիայի բոլոր տնտեսութեաններն ու արդիյցիաներն — ասում է Վ. Ի. Լենինը — զրնում են ընդդեմ պետական վերահսկողութեան, հանուն «սրբազան մասնավոր սեփականութեան», «սրբազան մասնավոր ձեռնարկութեան տնտեսականության» *):

Միանգամայն հասկանալի չէ, վոր արդյունաբերական կյանքի այնպիսի հարցեր, ինչպիսիք են որինակ՝ արտադրանքի ինքնարժեքը, ռադիկալացման ձեռնարկումներն ու դրանց կֆեկտավորութեանը, ոգուանների չափը և այլ նման հարցեր, վորոնք մեր պայմաններում վնչ միայն մատչելի չեն ստատիստիկայի ռեսուսմանթրութեան, այլ և հանդիսանում են հասարակական վերահսկողութեան որդիկներ, կապիտալիստական տնտեսութեան պայմաններում մատչելի չեն կողմնակի դիտողին: Յերկուրդ մոմենտը, վորի ազդեցությունն ուժեղ չափով իր վրա զգում է կապիտալիստական յերկրների արդյունաբերական ստատիստիկան, դա սոցիալական կարգերի բուրժուական դատակարգային բնույթն է: Այս մոմենտի առկայութեան պայմաններում վնչ միայն խոսք չի կարող լինել արդյունաբերութեան աշխատանքի նկատմամբ լայն հասարակական վերահսկողութեան ունենալու մասին, այլ և ընդհակառակը, ձեռք

են առնվում բոլոր միջոցները, վոր քողարկվեն դատակարգային հակադրութեանների բոլոր, հատկապես սուր մոմենտները: Նույն իսկ այնպիսի հարց, ինչպիսին գործադրկութեան չափերի հարցն է (մասնավանդ ներկայումս կապիտալիստական աշխարհում գոյութեան ունեցող ու շարունակվող ձգնաժամի ժամանակ), ինչպես հայտնի չէ, յերբեք իր ճիշտ լուսարանումը չի գտնում պաշտոնական ստատիստիկայի տրվյալներում:

Բուրժուական պետութեանների արդյունաբերական ստատիստիկան անխուսափելիորեն իր վրա կրում է կառավարող դատակարգի ճնշման կնիքը: Այս հանգամանքը չի կարող չանդրադառնալ ինչպես հետադրուման համար անմիջական թիմանների ընտրութեան, այնպես էլ վերջինների մշակումից հետո կատարվող վերջնական յեզրակացութեանների վրա: Այդ պատճառով էլ բուրժուական յերկրների պաշտոնական որդանների կողմից կատարվող ստատիստիկական աշխատանքների համար բնորոշ է վնչ թե այն ձգտումը, վոր իրականութեանը լուսարանվի այնպես, ինչպես վոր նա կա, այլ վոր այդ իրականութեանը ցույց տրվի ափելի վառ գույներով, այն ձգտումը, վոր ցանկալի գալիքի մասին նախադուշակումներ անելով՝ մտքերը հանդատցեն:

Մեր առածներին պիտի ավելացնենք, վոր չնայած ժողովրդատնտեսական պրոցեսների անարխիկ տարերային բնութեին և այդ տնտեսութեան մեջ պլանային կարգավորման բացակայութեանը, այդ տարրերայնութեան մեջ պիտի ավելի խորացնեյին այս կամ այն որինաչափութեան յերկույթների առկայութեան հայտարարման անհրաժեշտութեանը (և դրանով իսկ նպաստեյին ժողովրդատնտեսական մասշտաբով արդյունաբերական ստատիստիկայի գծով տարվող աշխատանքների զարգացմանը): Սակայն կառավարող դատակարգի անխուսափելի ճնշումն այդ աշխատանքները զրկում է անհրաժեշտ որդիկափութեանից, և արժեքազրկում դիտական տեսակետից: Այս կարգի աշխատանքները լավագույն դեպքում (ինչպես այդ տեղի ունի ՀՄՄ-ում) իրականացվում է պարբերական վիճակագրութեան միջոցով և կրում է վնչ թե դիտահետադոտական, այլ ափելի շուտ տեղեկատու բնույթ, իսկ ինչ վերաբերում է ընթացիկ դիտումների կարգով տարվող աշխատանքներին, ապա վերջիններս սահմանափակվում են ցուցանիշների շատ նեղ շրջանակով և իրենց ծավալով վնչ մի կերպ համեմատվել չեն կարող խորհրդային արդյունաբերական ստատիստիկայի աշխատանքների հետ:

Միանգամայն այլ պայմաններում է գտնվում արդյունաբերական ստատիստիկան ԽՍՀՄ-ում: Այստեղ վնչ միայն չկան այն պատենշները, վորոնք կանգնած են նրա հետադոտական նպատակների իրագործման առաջ, այլ ընդհակառակը, ստատիստիկան դարձել է բանվորական լայն մասսաների վերահսկողութեան որդան: Առանձին ձեռնարկութեանների աշխատանքներում ձեռք բերած նվաճումների և յեղած ձեղբվածքների վնչ թե լուրթյան մատնումը, այլ նրանց հայտարարումը և այդ փաստերի պատճառների վերլուծութեանը ընդհանուրի սե-

*) Լենին «Պորբրդային իշխանութեան հերթական խնդիրները» (Յերկերի լիակատար ժողովածու, 3-րդ հատ, 451 էջ:

փախուցումը զարմանալիս — ահա թե վերն և խորհրդային արդյունաբերական ստատիստիկայի պարտականությունը: Ստատիստիկան և մասնավորապես արդյունաբերական ստատիստիկան մեր պայմաններում բուրժուական կառավարող դասակարգին սպասավորելուց զարձիկ և հասարակական վերահսկողություն հղող գործիչ:

«Ստատիստիկան — ասում է Վ. Ի. Լենինը — կապիտալիստական հասարակության մեջ վարում են պետական չինովնիկները կամ դրանով բացառապես պաշտոնում նեղ մասնագետները, մենք պետք և ստատիստիկան շարժենք դեպի մասսաները, ժողովրդականացնենք այն, վերաբերել աշխատավորներին աստիճանաբար իրենք սովորեն հասկանալի լինելու և ինչպես և ինչքան պետք և աշխատել, ինչպես և ինչքան կարելի չի հանգստանալ» *): Ստատիստիկայի այս նոր դերի հետ մեկտեղ անհրաժեշտ է նշել նաև պլանային տնտեսության պայմաններում նրա առաջ ծառայած խնդիրների կոնկրետ ցուցանիշակություն կյանքի փոփոխությունները: Այլ ևս վաղ թե տարերայնորեն դասավորվող պրոցեսների ուսումնասիրություն, այլ «մեր կողմից գիտակցորեն նախադրվող գործողությունների և նրանց արդյունքների քանակա-վորական ընդգրկումն է» (Ռսինսկի) մեր պայմաններում կապում արդյունաբերական ստատիստիկայի հիմնական խնդիրը:

Անցնելով սոցիալիստական շինարարության ներկա կառուցում խորհրդային արդյունաբերական ստատիստիկայի ընդհանուր խնդիրների բնութագրման, անհրաժեշտ է մի անգամ ևս շեշտել այդ խնդիրների սերտ կապն արդյունաբերական հիմնական խնդիրների հետ (արդյունաբերության 2-րդ հնգամյակը թեմատիկա կապակցությունը):

Առաջին հնգամյակի ժամանակաշրջանում արդյունաբերության հիմնական խնդիրն ամբողջապես պայմանավորված էր ժողովրդական տնտեսության սոցիալիստական վերակառուցման խնդրով: Համ. Կ(բ) 16-րդ Համաժողովինական կոնֆերանսն արդյունաբերության ընդհանուր վառում տարվող տնտեսական քաղաքականության խնդիրները հետևյալ կերպ և ձևակերպել՝ «Խոշոր սոցիալիստական արդյունաբերության ստեղծումը, վերաբերել հիմք ժողովրդական տնտեսության սոցիալիստական վերակառուցման, վոր ընդունակ և վերակազմելու գյուղատնտեսությունը, բարձրացնելու պրոլետարական դիկտատուրայի յերկրի պաշտպանունակությունը և ազատագրելու ԽՍՀՄ ժողովրդական արմատությունը կապիտալիստական յերկրների կախումից — ահա այս և սոցիալիստական հասարակության հաջող կառուցման կարևորագույն խնդիրը»:

ԽՍՀՄ ժողովրդական տնտեսության յերկրորդ հնգամյա պլանը կազմելու համար, Համ. Կ(բ) Կ 16-րդ կոնֆերանսի կողմից արված դիրեկտիվները, վորպես յերկրորդ հնգամյակի խնդիրներ նշելով կապիտալիստական տարրերի և ընդհանրապես դասակարգերի վերջնական լիկվիդացիան և ԽՍՀՄ անդամակարգ սոցիալիստական հասարակության

կառուցումը, դրա համար վորպես բաղա համարում է ամբողջ ժողովրդականացումը յանհատական ծավալուն տեխնիկական վերակառուցումը և առաջին հերթին արդյունաբերությունը:

Մեզ թշնամի կապիտալիստական շրջապատման պայմաններում հղոր արդյունաբերություն ստեղծելու և նրա տեխնիկական բաղան վերակառուցելու ձեռնարկումների կիրառումը հենց իրենից, արդյունաբերությունից պահանջում է վերաբարձարություն ընդարձակման և ներարդյունաբերական կուտակումների ուղղությունը իրականացնել մի շարք միջոցառումներ: Այստեղից էլ բղխում է արդյունաբերությունը արված պլանային առաջադրանքները հաջողություն կատարելու անհրաժեշտությունը, առաջադրանքներ, վորոնք վորոշում են նրա աշխատանքների ինչպես ծավալը, յայնպես էլ վորակական ցուցանիշները:

Վերադառ կուտակցական և խորհրդային մարմինների դիրեկտիվներին համաձայն, վորոնք իրենց ձևակերպում են ստացել ժողովրդատնտեսություն զլխավոր պլաններում, արդյունաբերական աշխատանքներին յուրաքանչյուր ժամանակաշրջանի համար (տարեկան, յուսմայարկային և ամսական) առաջադրում են ստույգ թվեր և արտադրական պլաններ: Դրանից բղխում է այն, վոր արդյունաբերական ստատիստիկայի հիմնական խնդիրը հանդիսանում է արդյունաբերություն համար սահմանած պլանային առաջադրանքներին կատարման աստիճանի ուսումնասիրությունը, վերլուծելով նրա աշխատանքի այս կամ այն տեսակը պայմանավորող պատճառները:

Սակայն սխալ կլինի կարծել վոր արդյունաբերական ստատիստիկայի դերն ամբողջապես սպառվում է արդյունաբերության աշխատանքի փաստական արդյունքները պլանային առաջադրանքների հետ համեմատելով և արդյունաբերություն աշխատանքի տեսակերը պայմանավորող պատճառներին վերլուծումով: Նրա խնդիրը զգալիորեն լայն է: Պետք է նկատել ունենալ, վոր վաղ ընդհանուր ժողովրդատնտեսական պլաններով և վաղ էլ առանձին տնտեսական միավորների պլաններով (վորոնք կազմվում են ժողովրդատնտեսական պլանների հիման վրա) չեն ընդգրկում այն բոլոր առանձին յերևույթներն ու պրոցեսները, վորոնք տեղի յին ունենում արդյունաբերություն մեջ:

«Մենք ապրում ենք — ասում է Ս. Գ. Ստուլիցին — միախառնում պլանային սկզբունքի մղող կասալի պայքարի նեմապրաուլ: Ավարսված պլանային սենսուբյունը, ինչպես և ավարսված սոցիալիզմը դեռ մեռ առաջն են» *):

Պլանային սկզբունքի համար մղվող պայքարում, պլանային աշխատանքի կատարելագործման և յուրացման գործում ստատիստիկային անկասկած յուշոր դեր և վերապահված:

«Վորպեղի մեր պլանը դառնա գործողությունների լիակատար ուսու ծրագիր, — ասում է Ստուլիցին, — մենք պետք է բացի այն տնտեսական նպատակից, վոր մենք առաջադրել ենք մեզ, մենք պետք

*) Ակադեմիկ Ս. Գ. Ստուլիցին՝ «Պլանավորման պրոբլեմները ԽՍՀՄ-ում», էջ 13 (ընդգծումը տեքստին և Գ. Ս.):

և ճանաչենք նաև այն տնտեսական միջավայրը, վորը յենթակա յե մեր ազգեցութեանը, այն սոցիալական որոնքներն ու տեխնիկա-տնտեսական որիննաչափութեանները, վորոնց ներքինը յենթակա յեն, այն տնտեսական ռեսուրսները, վորոնց, ըստ մեր ցանկութեան, մենք տնորինում ենք և յուրաքանչյուր ձեռնարկումի կֆիկտավորութեան ճըշգրիտ չափը, վորը մենք մտցնում ենք գործողութեանների մեր ծրագրումն *):

Վերոհիշյալ ճանաչողական խնդիրներն արդյունաբերութեան բնագավառում մտնում են հենց արդյունաբերական ստատիստիկայի զբաղմունքները շրջանակի մեջ: Չսահմանափակվելով պլանի կառավարմանը հետևելով միայն, ստատիստիկան և մասնավորապես արդյունաբերական ստատիստիկան զբաղվում և արդյունաբերութեան մեջ տեղի ունեցող պրոցեսների ու յերևույթների բաղմակողմանի ուսումնասիրութեամբ, վորոշելով մի կողմից նրանց՝ միմյանց հետ ունեցած և մյուս կողմից՝ ինքն իր ժողովրդական տնտեսութեան մյուս բնագավառներում տեղի ունեցող պրոցեսներին հետ ունեցած կապը: Իրանով իսկ արդյունաբերական ստատիստիկան, ինչպես և ժողովրդատնտեսական ստատիստիկայի մյուս ճյուղերը, պլանային որոշանքներին՝ նրանց պլանային կառուցումներին համար նյութեր են տալիս, նպաստելով պլանային գեղավարութեան ավելի լայն կիրառման և պլանային հաշվումների ավելի խոր հիմնավորման: Վերջապես, անհրաժեշտ և նշել, վոր արդյունաբերական ստատիստիկայի խնդիրներին մեջ են մտնում նաև պլանավորման և պլանային գեղավարման վորակին հսկելու ֆունկցիաները:

Ամփոփելով շինարարութեան աշխատեցողության համապատասխան արդյունաբերական ստատիստիկային առաջադրված խնդիրներին մասին վերը բոլոր ասածները, այդ խնդիրները կարելի յե ձևակերպել վորպես արդյունաբերութեան մեջ տեղի ունեցող յերևույթների բաղմակողմանի ուսումնասիրութեան խնդիրներ: Այդ խնդիրները մե կողմից վորոշելու յեն արդյունաբերութեան կողմից պլանային առաջադրանքների կատարման աստիճանը և մյուս կողմից բաղմակողմանի անալիզի յենթարկելով նրա աշխատանքների տեմպերն ու պայմանները, պիտի պարզեն արդյունաբերութեան աշխատանքների իրական արդյունքների համապատասխան լինելն այն խնդիրներին, վորպիսիք նրա վրա դրված են սոցիալիստական շինարարութեան պայմաններում: Արդյունաբերական ստատիստիկային հատուկ նպատակային գրույթների վերաբերյալ այս բնորոշումը տեղադնելով այն ընդհանուր բանաձևի մեջ, վորով մենք տվեցինք արդյունաբերական ստատիստիկայի բնորոշումն ընդհանրապես, մենք դրանով իսկ այդ ձևական բնորոշմանը տալիս ենք միանգամայն վորոշ ու կոնկրետ բովանդակութեան:

Այս բնորոշումով խորհրդային արդյունաբերական ստատիստիկան մենք սահմանափակում ենք վոչ միայն ստատիստիկական այն աշխատանքների այլ ճյուղերից, այլ և նրան զանազանում ենք կապիտալիստական յերկրների արդյունաբերական ստատիստիկայից:

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՍՏԱՏԻՍՏԻԿԱՅԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՋՈՂ ԸՆԹԱՆԱԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Ուսումնասիրելով արդյունաբերութեան մեջ տեղի ունեցող յերևույթներն ու պրոցեսները, արդյունաբերական ստատիստիկան շատ սերտորեն հարակցվում և մի շարք այլ գիտական դիսցիպլինաների հետ, վորոնց հիմնովին ծանոթ լինելն անհրաժեշտ պայման և արդյունաբերական ստատիստիկայի աշխատանքների հաջող կատարման համար:

Ամենից առաջ միանգամայն ակնառի և, վոր ընդհանրապես արդյունաբերական ստատիստիկայի բնագավառում աշխատողը և մասնավորապես խորհրդային արդյունաբերական ստատիստիկայի բնագավառում աշխատողը, մասնավորապես վերլուծական աշխատանքին մասնակցելու հավակնութեանն ունեցող աշխատավորը պետք և հիմնովին գիտելով մաթեմատիկայի և ինքնաշարժիչ զինված լինելու մաթեմատիկայի գիտելիքները, առանց վորի անհնար և ուսումնասիրելիք յերևույթների ճիշտ ըմբռնումը:

Ստեղծագործական (ի տարբերումն հաշվառելիքականից) աշխատանքի հաջող կատարման յերկրորդ պայմանը՝ տեսական կոնսոմիտի, արդյունաբերական կոնսոմիտի, արդյունաբերութեան տվյալ-ճյուղի կոնկրետ կոնսոմիտի հետ հիմնովին ծանոթ լինելն և: Առանց նշված դիսցիպլինաների հիմնական ծանոթութեան չի կարող վոչ հաջող աշխատանքի և վոչ էլ ստատիստիկական յեղրակացութեանների ճըշտութեան յերաշխիք լինել:

Այնուհետև նշենք, վոր չի կարելի զբաղվել արդյունաբերական ստատիստիկայով, առանց ծանոթ լինելու տեխնիկական գիտելիքների վորոշ միևնույն արդյունաբերութեան այն ճյուղի արտադրական պրոցեսների վերաբերմամբ, վորը յենթակա յե ուսումնասիրութեան: Չի կարելի ճիշտ վերլուծական յեղրակացութեան հանդիս և մեծագուծութեան վերաբերյալ, յեթև չգիտենք այն պրոցեսները, վորոնցից դասավորվում ու գոյանում և նրա աշխատանքը, յերբ չգիտենք այն սպերդանները, վորոնք ոգտագործվում են այդ աշխատանքում: Անհնար և զբաղվել ստրադվորման ոգտագործման աստիճանի գնահատումով, յերբ չգիտենք ստրադվորման տվյալ տիպի կառուցվածքը և նրա աշխատանքի պրոցեսը:

Սակայն բացի գիտական դիսցիպլինաների բնագավառներին տեղյակ լինելուց, արդյունաբերական ստատիստիկայի բնագավառում աշխատող անձանց համար՝ միանգամայն անհրաժեշտ և գիտենալ ու հասկանալ իմաստը՝ կուսակցական ու կառավարական որոշանքների այն դիրեկտիվներին, վորոնց հիման վրա արդյունաբերութեանը պարտավոր և աշխատել սոցիալիստական շինարարութեան տվյալ համապատասխան: Ստատիստիկան խորհրդային Միությունում իմքնագլուխ չե, կամ լոկ ակադեմիական գրադուկցիան առարկա չե, նա պրոֆեսարական լայն մասսաների վերահսկողությանը որպես և, վոր պարզում և, քե ինչ չափով են կատարվում ժողովրդական ճնշանության սխալ հյուղում կուսակցության և կառավարության դիրեկտիվներ: Սակայն առանց այդ դիրեկտիվները

*) Մտրումելին — նույն տեղը, էջ՝ 14:

գլխահնարու, անհնարին և նաև կաղմակերպել զխոռոմները՝ նրանց կուտարման նկատմամբ:

ԱՐԴՅՈՒՆԱՐԵՐԱԿԱՆ ՍՏԱՏԻՍՏԻԿԱՅԻ ՓՈԽՀԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆ ԱՐԴՅՈՒՆԱՐԵՐԱԿԱՆ ՀԱՇՎԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԿԱԼԿՈՒՅՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ

Վորպեսզի միանգամայն հստակ պատկերացում ստանանք արդյունաբերական ստատիստիկայի ելույթյան մասին, անհրաժեշտ է նաև կանգ առնել նրա պրակտիկ գործունեությունից մյուս առևտրային փոխհաբերությունների խնդրի վրա:

Արդյունաբերական ստատիստիկայի խնդիրն և պարզաբանել ամբողջ արդյունաբերության և նրա առանձին բաղկացուցիչ միավորների աշխատանքի արդյունքները և իր ուսումնասիրության արդյունքներն արտահայտելով թվական ավյալների ձևով, նա ամենից առաջ սերտ կերպով մոտենում է արդյունաբերական հաշվապահությանը, վոր նույնպես ուսումնասիրում է արդյունաբերության մեջ տեղի ունեցող անաստական պրոցեսներին արդյունքները, վերջինս նամանակա իր ուսումնասիրության արդյունքներն արտահայտում է թվական ավյալների ձևով:

Բացատրելով արդյունաբերական ստատիստիկայի և հաշվապահության զանազանությունները, անհրաժեշտ է ամենից առաջ հրաժարվել պրակտիկայում տեղի ունեցող այն փոքրիկ, վորոնք ցանկանում են ստատիստիկան հակադրել հաշվապահությանը, համարելով առաջինը «անգրամական» հաշվառում, իսկ յերկրորդը՝ «գրամական», կամ թե՛ վնչ ճշգրիտ հաշվառում և ճշգրիտ հաշվառում:

Հաշվապահական հաշվառումն համարելով վորպես գրամական արժեքների հաշվառում, նրա հակադրումը ստատիստիկական հաշվառմանը, վորպես անգրամական արտահայտություն ունեցող յերեւոյթների հաշվառում, միանգամայն սխալ է: Այդ սխալը յերեւում է հենց նրանից, վոր հաշվապահական աշխատանքներին հատուկ է նաև այսպես կոչված բնական-առարկայական (քանակային) հաշվառումը և միևնույն ժամանակ ստատիստիկան շատ հաճախ հետաքրքրվում է գրամական արժեքներով (արդյունաբերության յերկարատե վարկավորման ստատիստիկա և այլն), իսկ յերեւմն էլ հաշվապահական աշխատանքների արդյունքները ստատիստիկայի կողմից և յենթարկվում մշակման (հաշվապահական հաշվիկշիռներին ստատիստիկական մշակումը): Նրա հետ մեկտեղ անհրաժեշտ է նշել, վոր ստատիստիկական հաշվառման վորպես նախնական, մոտավոր հաշվառման հակադրումը հաշվապահական հաշվառմանը, վորպես ճշգրիտ, վերջնական հաշվառում — նույնպես սխալ է, քանի վոր ստատիստիկան մի շարք աշխատանքներում ճշգրտում է ոգտագործել հաշվապահական հաշվառման ավյալները:

Ստատիստիկայի և հաշվապահության տարբերությունը կայանում է գրանցից յուրաքանչյուրի առաջ գրված խնդիրների զանազանությամբ: Մենք արդեն նշեցինք, վոր ստատիստիկական աշխատանք-

քի վերջնական նպատակը բնագնահատող յեղրակացություն ստանալն է, մի յեղրակացություն, վորը նայած ավյալ հետադրություն կունկրես նպատակներին, կորող է արտահայտվել կամ միավորների վորոշ հանրագումարի տնիտիկ բնութագրություն ձևով, կամ ամփոփիչ կապակցություններ (որինաչափություններ, կախվածություններ) սահմանելու ձևով: Հաշվապահության խնդիրն և ավյալ ձևանարկություն նյութական իրավունքների և պարտավորությունների ու վորոշ ժամանակաշրջանում ձևանարկության գործունեություն անաստական արդյունքների ու վերջնական գրեկորումը: Հաշվապահության այս յւրեղից բղիւում է ձևանարկության մեջ տեղի ունեցող յեղակի գործողությունների, նյութական արժեքների, մուտք ու յելքի ճշգրիտ գրանցումը:

Այստեղ կրկնենք հաշվապահության ու ստատիստիկայի կողմից առանձին անաստական գործողություններին ցուցարկելով մասեցման տարբերության վերաբերյալ այն որինակը, վոր մենք բերել էյինք մեր «Ստատիստիկայի տեսության հիմունքները» գաւրնթացում *), Յենթադրենք, թե հարցը վերաբերում է բանվորների աշխատավարձի հաշվառմանը: Հաշվապահություն յղեակական ճշգրտությունը գրանցում է աշխատավարձի վճարման յուրաքանչյուր փաստ, ճշտիվ գրանցելով թե հմ, յիբր և ինչի համար և վճարված աշխատավարձ: Այս ավյալների ճշտիվ գրանցումը միանգամայն անհրաժեշտ է, քանի վոր առանց գրան անկարելի յե պարզել բանվորներին նկատմամբ ձևանարկության ունեցած նյութական իրավունքների և պարտավորությունների ծախսը: Նրանցումներն անճշտությունն այստեղ կարող է նյութական վնաս հասցնել կամ ձևանարկությանը, կամ բանվորներին և հետևարար այգպխին համարվում է հանցագործություն:

Ստատիստիկան ուսումնասիրելով բանվորների աշխատավարձը, բորբոքվին չի հետաքրքրվում աշխատավարձի անհատական վճարումներին փաստելով: Նրան չեն հետաքրքրում առանձին բանվորի և ձևանարկության միջև յեղած նյութական-իրավական հարաբերությունները: Նրան հարկավոր է բնագնահատող յեղրակացություն-հետևություն, այսինքն՝ միջին աշխատավարձի միծությունը, իսկ առանձին բանվորների աշխատավարձի մասին յեղած ավյալները նրա համար նյութ են ծառայում այդ բնագնահատող յեղրակացությունը (հետևություն) ստանալու համար: Սակայն այդ բնագնահատող հետևություն համար առանձին բանվորի աշխատավարձի մասին յեղած ավյալների անճշտությունը չի կարող արատավորող նշանակություն ունենալ:

Այսպիսով, ստատիստիկայի և հաշվապահության զանազանությունն այն է, վոր ավարտված ստատիստիկական աշխատանքը միշտ ձգտում է բնագնահատող հետևություն անել: Իսկ հաշվապահական հաշվառման, վորպես այգպխին, նպատակն է գրեկորել և համարել անաստական միջ կատարված ծախսերը և առացված արդյունքները:

*) Տես Ն. Սավինսկի «Ստատիստիկայի տեսության հիմունքները», առաջին մաս, հեռ. Ֆին. ինտիտ. հրատ. 1932 թ., էջ 20:

Վերևում ասածից հետո, մեզ համար համեմատաբար հեշտ էլլինի սահմանադիր անցկացնել նաև արդյունաբերական վիճակագրության և արդյունաբերության, այսպես կոչված, գործառնական հաշվառման միջև:

Այստեղ ամենից առաջ պետք է վերապահորեն նկատենք, Վոր զործնական հաշվառման հասկացողությունն ընդհանրապես չստիպում է անորոշ և: Գործառնական հաշվառման անվան տակ ընդունված է հասկանալ այն տնտեսական փաստերի հաշվառումը, վորն անհրաժեշտ տեղեկություններ է տալիս աշխատանքի այս կամ այն ճակատամասի վրա գործառնական ներգործությունն ունենալու համար: Գործառնական հաշվառման մասին խոսելիս անհրաժեշտ է նշել, Վոր նրա անմիջական խնդիրը՝ առանձին փաստերը գրանցելն է: Իսկ այդ առանձին փաստերի մասին տվյալների ընդհանրացումն արդեն դուրս է դալիս գործառնական հաշվառման շրջանակներից: Գործառնական հաշվառման տվյալներից ընդհանրացնող հետևությունն անհերքելի կդառնա ստատիստիկական գործողություն:

Վորպեսզի ավարտենք արդյունաբերական ստատիստիկայի և պրակտիկ աշխատանքների ու նրան հարակից այլ ճյուղերի (վորոնք թվական ընթացիկներն են տալիս արդյունաբերության բնագավառում տեղի ունեցող յերևույթներին ու պրոցեսներին) միջև յեղած փոխհարաբերություններն ընթացիկները, համառոտապես կանգ առնենք արդյունաբերական ստատիստիկայի և արդյունաբերական կալիուլյացիայի միջև յեղած փոխհարաբերության վրա:

Կալիուլյացիա ասելով հասկացվում է ինֆլացիոն հաշվում: Արդյունաբերության մեջ արտադրական կալիուլյացիան զբաղվում է արդյունաբերական արտադրանքի ինքնարժեքի հաշվառումով: Իր հատուկ խնդիրն ունենալով, կալիուլյացիան զննում է դեպի այդ նպատակը, անհրաժեշտ տվյալներ վերցնելով հաշվապահական փաստաթղթերից և վերջիններս մշակման ընթացքում ոգտվում է ստատիստիկական մեթոդի յեղանակներից: Կալիուլյացիայի մեջ ստատիստիկական մեթոդի դերը ընտրվում է նրանով, Վոր կալիուլյացիան հաճախ ամենուրեք գործում է այն ամփոփիչ մեծություններով, վորոնք մասնում են վիճակագրական ինտրուկենտումի կողմի մեջ. տվյալ տեսակի արտադրանքի միջին ինքնարժեքի հաշվառումը, հումքի, վառելանյութի և այլնի միջին ծախսերի հաշվառումը, արտադրանքի միավորի համար ծախված առկուսային հարաբերության սահմանումը, ցեխային և համադրածարանային ծախսերը արտադրանքի միավորի վրա բաշխելիս:

Այս ամենը աշխատանքի ստատիստիկական յեղանակների ոգտագործման դեպքեր են: Առանձնապես նշանակալից է ստատիստիկական մեթոդի դերը ինքնարժեքի այս կամ այն մակարդակը պայմանավորող փաստերի վերլուծության գործում:

Սուսափելով կալիուլյացիայի և ստատիստիկական մեթոդի փոխհարաբերության մանրամասն վերլուծությունից, դառնանք արդյունաբերական ստատիստիկայի և արդյունաբերական կալիուլյացիայի փոխհարաբերության հարցին: Վերևում ասածից պարզ է արդեն, Վոր ար-

դյունաբերական կալիուլյացիան ունի իր աշխատանքի ճիշտ սահմանադրված բնագավառը: Մենք հենց նոր ասացինք, Վոր նրան հատուկ է ընդհանրացումներ անելու տարրը. բայց այդ ամենը չի դուրս դալիս առանձին (ճշտիվ վորոշված և վորոշ ձևաարկության մեջ ու վորոշ ժամանակաշրջանում արտադրված) պրոդուկտի ինքնարժեքը սահմանելու շրջանակներից: Հետագա ընդհանրացման խնդիրն է տվյալ պրոդուկտի միջին ինքնարժեքի վորոշումն ըստ մի շարք արտադրական ձևաարկությաններին, ինքնարժեքի մակարդակի համեմատական գնահատումն ըստ ժամանակի և տեղի (այսինքն ըստ զանազան ձևաարկությաններին), ինքնարժեքի կանկրետ բաղադրանությունների պատճառների վերլուծությունը, պլանային առաջադրանքներից նահանջելու ու շեղվելու պատճառների վերլուծությունը և այլն. այս ամենը կազմում է կալիուլյացիոն տվյալների ստատիստիկական մշակման խնդիրը:

Այսպիսով, կալիուլյացիան, ինչպես և հաշվապահությունն ու ոպերատիվ հաշվառումը արդյունաբերական վիճակագրությանը տրամադրում են նյութեր՝ ընդհանրացնող վերջնական մեակություն համար: Այդ նյութերը արդյունաբերական վիճակագրության կողմից փոխադարձ կապակցության են յենթարկվում, վորպեսզի ստացվի ընդհանրացնող և ամբողջական պատկեր՝ արդյունաբերության, այդ բաղադրվածների յերևույթներից լի վորոտի զանազան բնագավառների աշխատանքների մասին:

ՄԻԱՍՆԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀՈՇՎԱՌՄԱՆ ՊՐՈԲԼԵՄԸ

Հաշվապահական, ստատիստիկական և գործառնական հաշվառումների զուգահեռ գոյությունը, համարյա հաճախ հանդում է միևնույն հարցի վերաբերյալ տվյալների անհամաձայնության ու անհամապատասխանության: Այստեղից էլ առաջանում է միասնական հաշվառում տեսչեկու միջոցով այդ զուգահեռականությունը վերացնելու անհրաժեշտությունը: Հաշվապահական, ստատիստիկական և գործառնական հաշվառումների հիշյալ միասնությունն ստեղծման անհրաժեշտությունն արձանագրվել է Համ. Կ(Բ)Կ 16-րդ կուսկոնֆերանսի վորոշումներով: Հետագայում, հաշվառման զանազան սիստեմների կապակցման մասին անմիջական ղերկարիվ իր արտահայտությունը գտավ ԽՄՀ Ժողկոմիտրի 1931 թ. մայիսի 9-ի վորոշման մեջ:

Հաշվառման մեր կենտրոնական որդանների և հաշվային հատարակայնության կողմից հաշվառման վերակառուցման խնդիրն ընդունվեց և ձևակերպվեց վորպես միասնական սոցիալիստական հաշվառում տեսչեկու խնդիր: Մանրամասն կանգ չառնելով այն կազմակերպչական միջոցառումների վրա, վորոնք անհրաժեշտ են միասնական սոցիալիստական հաշվառում ստեղծելու վերաբերյալ զրույթներ իրականացնելու համար, կանգ առնենք նրա հիմնական, ընտրող խնդիրների վրա:

Ամենից առաջ պետք է ապահովվի հաշվառման միասնությունը: 15

Այդ միասնությունը չպետք է անտեսել ու վերացնել այն առանձնահատուկ խնդիրները, վերոնք հատուկ են հաշվառման յուրաքանչյուր տեսակի համար: Միասնությունը կարող է իրագործվել միասնական նախնական փաստաթուղթ ստեղծելու միջոցով, մի փաստաթուղթ, վորի առկայությունը կվերացնի տարաձայնությունները հաշվառվողական տվյալների մեջ: Այդ ինչպես ասված է 16-րդ կուսակցական կոնֆերանսի բանաձևերում, միասնական փաստաթղթի հիմքը պետք է ծառայի ժողովրդատնտեսական պլանների ձևերը: Այսպիսով էլ ըզխում է պլանա-գործառնական ղեկավարություն կարիքների հիման վրա հաշվառման և հաշվառվողական ցուցանիշների սխառն մշակելու անհրաժեշտությունը:

Միասնական սոցիալիստական հաշվառման յերկրորդ խնդիրը՝ նրա այնպիսի պարզեցումն է, վորը հնարավորություն ընձեռեր անհրաժեշտ հաշվառվողական տվյալներ ունենալ բավականաչափ արագ ժամկետներում: Հաշվառվողական ինֆորմացիայի այդ արագությունն անհրաժեշտ նախապայմանն է, վորպեսզի հնարավոր լինի ողատգործել հաշվառվողական տվյալները, իր ժամանակին ոպերատիվ կերպով ներգործելու համար տնտեսական աշխատանքի համապատասխան բնագավառի վրա:

Վերջապես յերրորդ մոմենտը, վոր պետք է իրականացվի միասնական սոցիալիստական հաշվառման սխառնի իրագործման միջոցով, այդ հաշվառման և հաշվառվողական գրվածքի այնպիսի բարելավումն է, վորպեսզի նրանք վոր միայն ծառայեն ընդհանուր կառավարման և տեխնիկական ղեկավարության նպատակներին, այլև տարվին բանավորների լայն խավերին հասկանալի ձևերով և ոպեն սոցիալիստական մրցակցության ու հարվածայնության շարժման կազմակերպմանն ու ղեկավարմանը և ձեռնարկությունների միջև փորձի փոխանակմանը» (16-րդ կուսակոնֆերանսի բանաձևերից):

Կենտրոնական վիճակագրական վարչության (ԱԿՄ) նախկին կառավարիչ Պ. Ի. Պոսովին դեռ 1921 թ. գրած նամակում, Լենինը նշելով արդյունաբերության աշխատանքի վերաբերյալ 8 հարց, վորոնց անհրաժեշտ էր տալ շուտափուլ փաստախան, գրում էր՝ «Թող Կենտրոնական վիճակագրական վարչության (ԱԿՄ) և նահանգական վիճակագրական բյուրոյի առկա ուժերի ⁹/₁₀-ը անմիջապես արամադրվի այդ 8 հարցի ճիշտ և արագ մշակմանը, իսկ ¹/₁₀-ը արամադրվի լրիվ և համայնապարփակ տեղեկությունների տկաղեմիական ուսումնասիրությանը: Յեթև այլ կերպ հնարավոր չէ, ապա հարկավոր է ուժերի ⁹⁹/₁₀₀-ը արամադրել այն հարցերի մշակման, ինչ վոր մեր շինարարության համար գործնականորեն և անմիջականորեն հարկավոր է, իսկ մնացած հարցերը հետաձգել մինչև լավագույն ժամանակները, յերբ ավելորդ ուժեր կունենանք»:

Հաշվառման մասին բոլոր այդ գրույթների իրականացումը, նըպատակ ունենալով միավորել հաշվառման բոլոր տեսակները և միասնական սոցիալիստական հաշվառում ստեղծելը, պահանջում է չափա-

ղանց մեծ ու բարդ կազմակերպչական նախապատրաստություն և հանդիսանում է մեր հաշվառման և հաշվառվողական որդանների մոտակա ժամանակաշրջանների խնդիրը:

Վերջին յերկու-յերեք տարին բոլոր տնտեսավարական ժողկոմատների, նույն թվում նաև արդյունաբերությունը ղեկավարող ժողկոմատների գծով վորոշ քայլեր արվեցին հաշվառման այդ տարեր տեսակները միացնելու ուղղությամբ: Դժբախտաբար, այդ միջոցառումները տարվում էյին վնչ թե նախնական փաստագրության վերանայման և հաշվառման առանձին տեսակները որդանապես ձուլելու ուղղությամբ, այլ հաշվառման ու հաշվառվողական միասնական որդանների՝ նրանց լոկ արտաքին միացման ուղղությամբ: Քանի վոր այդ բարեփոխումն անց էր կացվում առանց նախնական կազմակերպչական նախապատրաստություն, դրա արդյունքը, մի շարք դեպքերում, յեղավ հաշվառման առանձին տեսակների, մասնավորապես հաշվառահանրի թուլացումը: Դրա արդյունքը յեղավ ԽՍՀՄ Ժողկոմխորհի 1932 թ. հոկտեմբերի 29-ի վորոշումը, վորով առաջարկվեց հաշվառման և հաշվառվողական սեկտորների բաժանումը յերկու ինքնուրույն որդանների, հաշվառահանրան ապարատները նրանցից առանձնացնելու միջոցով: Ծանր արդյունաբերության գծով համապատասխան վերակառուցում կատարվեց ԾԱԿ-ի 1932 թ. հոկտեմբերի 2-ի և դեկտեմբերի 29-ի հրամաններով, ինչպես և հաշվառ-վիճակագրական ապարատների մասին որինակի ի կանոնագրության հրապարակումով:

1932 թ. վերջին հաշվառահանրան և վիճակագրական ապարատների բաժանման կապակցությամբ, բնականաբար հարց է ծագում, չի՞ն կարող արդյոք այս ձեռնարկումները ղեկավել վորպես հաշվառման տարեր իրարից միացման գրույթից հրաժարում, թե այդ ձեռնարկումները պետք է այլ կերպ ղեկեր:

Այս հարցերին բավականաչափ պարզորոշ պատասխան է արվում թեկուզ ԾԱԿ-ի 1932 թ. դեկտեմբերի 29-ի (տրեստների և ձեռնարկությունների հաշվառահանրան ապարատների մասին) հրամանի պատճառարանման մասում: Հրամանն ասում է, վոր անհրաժեշտ է «վերացնել վերջին ժամանակներն աշխատանքի այդ բնագավառի վերաբերմամբ նկատված թերազնահատումը և հաշվառահանրան հաշվառման որդանի կազմակերպչորեն ամրացման միջոցով ապահովել նրա ճշտիվ ու ժամանակին գործելու անհրաժեշտ պայմանները»: Խոսքը վերաբերում է միայն հաշվառահանրության կազմակերպչական ամրացմանը, նրան այն ինքնուրույնությունը արամադրելուն, վորը միանգամայն անհրաժեշտ է նրա վերահսկողական ֆունկցիաների իրագործման համար:

Ճիշտ նույնպես ստատիստիկական հաշվառման վերաբերյալ պետք է նշել վոր ձեռնարկությունների ու տրեստների ապարատի մյուս մասերից նրա որդանների առանձնացման նպատակն է՝ այդ որդաններն ամրադնել և ապահովել նրանց (ստատիստիկական որդաններ) կողմից ձեռնարկության աշխատանքի արդյունքների բաղմակողմանի վերլուծության ֆունկցիաներն իրականացնելու, միաժամանակ պար-

գերու ձեռնարկութեան աշխատանքներու անդի ունեցող ձեռքվածքնե-
րի պատճառները: Խոսելով հաշվետու-ստատիստիկական որդանների ա-
պարատի մյուս մասերից առանձնացնելու մասին, պետք է կանգ առ-
նել ԾԱՖԿ-ի հրամանում տեղ դառնալից այն պահանջի վրա, վորով ստա-
տիստիկական ապարատը պարտադիր կերպով առանձնացված է պլա-
նային որդաններից: Այդ պահանջի իմաստն այն է, վոր ապահովվի
արդյունաբերութեան աշխատանքների ստատիստիկական վերլուծու-
թեան լիակատար անշահախնդրութեանն ու անկողմնապահութեանը և
ապահովվի վերահսկողութեանը վնչ միայն արդյունաբերութեան հա-
մար սահմանված պլանների կատարման, այլ և իրեն՝ պլանավորման և
պլանային ղեկավարութեան վորակի վրա:

Ինչպես արդեն մեր կողմից նշված է, ԽՍՀՄ Ժողկոմխորհի 1932
թ. սեպտեմբերի 29-ի ղեկընտարված վերոնշյալ հաշվապահական և
ստատիստիկական ապարատների բաժանումը նպատակ ունի կազմա-
կերպութեամբ ամբապնդելու այդ որդանները, վորպեսզի ուժեղացնի նրանց
վերահսկողական ֆունկցիաները: Սակայն զբառն զուգահեռ պետք է նա-
խադատարարական աշխատանք տարվի միատեսակ վատագույն
ստեղծելու ուղղութեամբ, մի վատագույն, վոր պետք է հանդիսանա
միատեսակ հաշվառման հիմքը:

ԺՈՂՈՎՐԴԱՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՔԻ ՅՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՍԻՍՏԵՄԸ ԱՐ-
ԴԵՐՆԱԲԵՐԱԿԱՆ ՍՏԱՏԻՍՏԻԿԱՅԻ ՄԵՋ ՅԵՎ ՄԵՐ ԴԱՍԸՆԹԱՅԻ
ՍԻՍՏԵՄԸ

Վերևում մենք ձևակերպեցինք սոցիալիստական շինարարութեան
ավյալ ետապում արդյունաբերական ստատիստիկայի ընդհանուր խըն-
դիրը, վորպես արդյունաբերութեան կողմից նրա համար սահմանված
պլանների կատարման վրա ղրողներ ունենալու և արդյունաբերու-
թեան աշխատանքի արդյունքները բազմակողմանի լուսաբանելու (վեր-
լուծելով այդ արդյունքները) խնդիր:

Կոնկրետացնելով այդ ընդհանուր խնդիրը, մենք պետք է ար-
դյունաբերական ստատիստիկայի կենտրոնական խնդիրը համարենք
արդյունաբերական գործունեյութեան արդյունքների ուսումնասիրու-
թեանը, այն է՝ արտադրական ձեռնարկութեանների արտադրանքի ու-
սումնասիրութեանը: Արդյունաբերութեան արտադրանքի արդյունքնե-
րի ընդհանուր խնդիրը տրոհվում է հետևյալ մասնավոր խնդիրների.
1. արտադրանքի քանակի և կազմութեան հաշվառումը՝ համադրելով
այդպիսիք պլանին, 2. արտադրանքի հանրագումարային ընդհանուրի
հաշվառումը (արժեքային հաշվառման գանազան տեսակները, հաշվառ-
ման այլ տեսակները), 3. արտադրվող արտադրանքի վորակի հաշվա-
ռումը:

Պարզելով ձեռնարկութեանների արտադրական աշխատանքի ար-
դյունքները (նրանց արտադրանքը), արդյունաբերական ստատիստի-
կան պետք է զբաղվի նաև այդ արդյունքները պայմանավորող հիմնական

Արդյունաբերութեան արտադրական աշխատանքի արդյունքները
պայմանավորող հիմնական գործոնների թվին և պատկանում ամենից
առաջ բանվորական ուժը (աշխատուժը): Ուսումնասիրելով բանվորա-
կան ուժի դրութեանը արդյունաբերութեան մեջ, արդյունաբերական
ստատիստիկան պետք է աչքի առաջ ունենա այն արմատական վորո-
խութեանը, վոր մասնավոր կապիտալիստական ձեռնարկութեանների
համեմատութեամբ տեղի յն ունեցել բանուժի դրութեան մեջ, ևՍՀՄ
սոցիալիստական արդյունաբերութեան մեջ:

Մեքենայի հատարակ կցվածքից բանվորը, սոցիալիստական ար-
դյունաբերութեան մեջ, գործել և սոցիալիստական շինարարութեան
ակտիվ մասնակիցը, և իր աշխատանքում կիրառում է մինչև այդ չտեսն-
ված աշխատանքի սոցիալիստական մեթոդներ ու ղեկավար որդաննե-
րից արված պլանային առաջադրանքներին հակադրում է իր հանդի-
պական պլանները: Աշխատավորութեան դրութեան մեջ տեղի ունեցած
այդ արմատական հեղաշրջումը ստատիստիկայի վրա պարտականու-
թեան և դնում արդյունաբերութեան մեջ բանվորական ուժն առանձ-
նապես մանրադնին և բազմակողմանի ուսումնասիրելու:

Արդյունաբերութեան մեջ աշխատանքի ուսումնասիրութեան ժա-
մանակ արդյունաբերական ստատիստիկան շիվում է ստատիստիկայի
մի այլ ճյուղի հետ, այն է՝ աշխատանքի ստատիստիկայի հետ: Վեր-
ջինս զբաղվելով ժողովրդական տնտեսութեան բոլոր ճյուղերում աշ-
խատանքի հարցերի ուսումնասիրութեամբ, հետաքրքրվում է նաև ար-
դյունաբերութեան մեջ ներդրվող աշխատանքի հարցերով: Արդյունա-
բերութեան մեջ ներդրված աշխատանքի ուսումնասիրութեան հարցում
արդյունաբերական ստատիստիկայի և աշխատանքի ստատիստիկայի
միջև սահմանադրում անցկացնելը վերին աստիճանի պայմանական է:
Արդյունաբերական ստատիստիկայի պարտականութեաններին վերա-
բերում են բանվորական ուժի հետ կապված այն հարցերը միայն, վոր-
ոնք անմիջականորեն անդրադառնում են արդյունաբերութեան աշ-
խատանքի արդյունքների վրա: Իսկ աշխատանքի ստատիստիկան հար-
ցին մոտենում է զգալիորեն ավելի լայն կերպով, իր ուսումնասիրու-
թեան վորտալ մեջ առնելով վոչ միայն այն հարցերը, վորոնք հետա-
քրքրում են արդյունաբերական ստատիստիկային, այլ և մի շարք այլ
հարցեր, վորոնք անմիջականորեն չեն ազդում արտադրական գործու-
նեյութեան վրա, (բանվորների արդյունաբերական տրավմատիզմը,
բանվորական բյուջեները և այլն):

Մենք միանգամայն սխալ ենք համարում արդյունաբերական և
աշխատանքի ստատիստիկաների սահմանադրման նկատմամբ յեղած
այն մերձեցումը, վորը ցանկանում է այդ սահմանադրումը տեսնել այս
կամ այն հարցի զբաղվող տարբեր տեսակետների մեջ, այն է՝ ձեռ-
նարկութեան տեսակետ և բանվորական տեսակետ (ձեռնարկութեան
համար աշխատավարձն արտադրական ծախսերի մի տարր է, իսկ բան-
վորի համար՝ յեկամաի աղբյուր է): Իբր թե տարբեր տեսակետների

բիւ Հիմնական հարցը, Վոր աշխատե՞լ ծա-
վալի միալորի չափման հարցն է:

Այս խնդիրը համեմատաբար հեշտ լուծելի չէ, յերբ ուզում ենք
պարզել շինարարական աշխատանքների ծախսը վորեւ միատարր և
վոչ բարդ որչեկտում (բնակելի տուն, պահեստի շենք): Այստեղ կա-
տարված աշխատանքների ծախսը հեշտ և արտահայտել չափման այս
կամ այն նատուրալ միալորներով (տարածութեամբ, կուբատուրա):
Բայց յերբ անհրաժեշտ է լինում չափել վորեւ բարդ որչեկտի կառուց-
ման աշխատանքների ծախսը (արտադրական ձեռնարկութեան մի շարք
շենքերով ու կառուցումներով և բազմազան սարքավորումով), մենք
այստեղ դեմ ենք առնում այնպիսի միասնական նատուրալ չափիչի բա-
ցակալութեան, վոր թույլ տար այդ բարդ շինարարութեան տարբեր
մասերում կատարված աշխատանքներն ի մի բերել: Այստեղից բխում
է արժեքային ցուցանիշներով ոգտվելու անհրաժեշտութեանը: Սակայն
արժեքային ցուցանիշների ուղու վրա կանգնելով, մենք միանգամից
դեմ ենք առնում հարցերի մի այլ խմբի, այն է՝ լինչպէս համատեղել
կատարված աշխատանքների ծախսը պլանային առաջադրանքների
հետ այն դեպքերում, յերբ շինարարութեանը կատարվում է վոչ պլա-
նով նախատեսված գներով, լինչպէս կատարել շինարարութեան ծախս-
ի համադրութեանն ու համեմատութեանը, մի քանի իրար հաջորդող
ժամանակաշրջանների սահմաններում, յեթէ շինարարական աշխատանք-
ների գները փոփոխվում են և այլն:

Զորչափելով այս հարցերի լուծման հնարավոր յեղանակները և
այստեղ սահմանափակելով լոկ նրանց հասարակ թվարկումով, անց-
նենք արդյունաբերական շինարարութեան ուսումնասիրութեան ժամա-
նակ արդյունաբերական ստատիստիկայի առաջ ծառացած մյուս խն-
դիրներին:

Բացի շինարարութեան ծախսն ուսումնասիրելը, արդյունաբերա-
կան ստատիստիկան պետք է զբաղվի շինարարութեան ըստ նպատակ-
ների և ըստ բնույթի կազմութեանը պարզելով՝ դրանք են՝ նոր շինա-
րարութեան, բնորոշված և վերակառուցում, կապիտալ վերանորո-
գում, իսկապես արդյունաբերական շինարարութեան, բնակարանային
շինարարութեան և այլն:

Կապիտալ շինարարութեան ուսումնասիրութեան ժամանակ հետա-
դա հարցը, վոր ծագում է, դա շինարարութեան վերջնական արդյունք-
ների հարցն է. ավարտված որչեկտները շահագործման հանձնելու հարցն
է, բնութագրելով նաև նրանց արտադրական կարողութեանը:

Կապիտալ շինարարութեան ուսումնասիրութեան ժամանակ թվար-
կած հիմնական թեմաներին պետք է ավելացնել մի շարք այլ հարցեր,
վորոնք բնութագրում են շինարարական աշխատանքների իրականաց-
ման պայմանները, դրանք են՝ բանվորական ուժի դրութեան, շինարա-
րութեան համար նյութեր և սարքավորում մատակարարելու հարցերը,
շինարարութեան մեքենայացման աստիճանը, շինարարութեանը նա-
22 խաղձերով և զծապերով ապահովված լինելու աստիճանը և այլն:

Այսպիսով, արդյունաբերական ստատիստիկան շինարարութեան
ուսումնասիրելու ժամանակ դեմ է առնում հարցերի վոչ պակաս լայն,
բայց զգալիորեն սովելի բարդ բնագավառի, քան այդ տեղի ունեւոր-
դյունաբերութեանն ուսումնասիրելու ժամանակ:

Արդյունաբերական շինարարութեան ուսումնասիրութեան հետ ան-
մեջակապորեն կապված է արդյունաբերութեան հիմնական ֆոնդերի
կազմութեան և զինամիկայի ուսումնասիրութեան խնդիրը: Այս հարցի
վերաբերյալ արդյունաբերական ստատիստիկայի հետազոտական աշ-
խատանքների համար վորպես նյութ կարող են ծառայել հաշվապահա-
կան հաշիվիչիտների տվյալները:

Սրանով մենք վերջացնում ենք այն հիմնական հարցերի ցանկը,
վորոնց ուսումնասիրութեանը կազմում է արդյունաբերական ստատիս-
տիկայի խնդիրը: Մենք այստեղ չորչափեցինք մի շարք հատուկ հար-
ցեր, վորոնք ծագում են արդյունաբերութեան առանձին ճյուղերի և
առանձին արտադրական ձեռնարկութեանների կոնկրետ պարագանե-
րում և իրենց ստատիստիկական ուսումնասիրութեանը պահանջում:
Սակայն արդյունաբերական ստատիստիկայի աշխատանքների շրջա-
նակը բնութագրող հիմնական հարցերի վերբ բերած ցանկից արդեն
պարզ է, թէ վորքան բազմապիսի ու բազմակողմանի պետք է լինեն
արդյունաբերական ստատիստիկայով զբաղված ապարատի ֆունկցիա-
ները և թէ վորքան պատասխանատու չէ նրա դերը արդյունաբերու-
թեանն ուղեկցելով դեկամետրութեան ցույց տվող որդանների սխա-
տում:

Բնութագրելով արդյունաբերական ստատիստիկայի որդանների
խնդիրների ընդհանուր շրջանակը, անցնենք արդյունաբերական վի-
ճակագրութեան ներկա դասընթացի հիմնական մասերի շարադրու-
թեանը:

Արդյունաբերական ստատիստիկայի ներկա դասընթացի ընդհա-
նուր խնդիրն է՝ ստատիստիկական աշխատանքների շարադրութեանն
ու տեսական հիմնավորումն արդյունաբերական ստատիստիկայով զբաղ-
վող որդանների և առանձին անհատների առաջ զբված բոլոր հիմնա-
կան պրոբլեմների ուսումնասիրութեան ժամանակ:

Վերբ հիշատակված հերթական պրոբլեմների ուսումնասիրութեան
մեջ կիրառվող ստատիստիկական աշխատանքների մեթոդոլոգիային,
ներկա դասընթացում, նախորդում է յերկու դուլս, վորոնցից մեկը պար-
զաբանում է արտադրական ձեռնարկութեան հասկացողութեանը վոր-
պես արդյունաբերական ստատիստիկայի՝ ստատիստիկական զխուսների
հիմնական միավորի, մյուսը լուսաբանում է կլասիֆիկացիայի հարցը
և հաշիվական նյութի խմբավորման այն մյուս տեսակները, վորոնք
տեղ են գտնում արդյունաբերական ստատիստիկայի աշխատանքնե-
րում:

Դասընթացի հետագա սխառմը բնորոշվում է առանձին թեմա-
ների հետեյալ հաջորդականութեամբ. ուսումնասիրութեան մեթոդները՝
ա) արդյունաբերական արտադրանքի, բ) բանվորական ուժի, քանակի

ու կադմի, դ) վառելիքային և ուժային աղբյուրներ, դ) արտադրական սարքավորման, յե) աշխատանքի արտադրողականություն, զ) աշխատավարձի, ե) ինքնարժեքի, ը) հիմնական ֆոնդերի կազմություն և ղինամիկայի, միաժամանակ շարադրելով կապիտալ շինարարություն ուսումնասիրության մեթոդություն:

ՄՆԹՈՂԱԿԱՆ ՅՈՒՅՈՒՄՆԵՐ I ԳԼԽԻ ՀԱՄԱՐ.

Սույն գլուխը հանդիսանալով արդյունաբերական ստատիստիկայի դասընթացի ընդհանուր ներածությունը, հետադիմում է արդյունաբերական ստատիստիկայի մասին, վորպես պրակտիկ գործունեություն մի ձևով և վորպես տեսական գիտելիքներ հասկացողություն տալու նպատակ:

Քանի վոր արդյունաբերական ստատիստիկան (յեթև խոսելու լինենք նրա մասին վորպես պրակտիկ գործունեություն) ներկայացնում է արդյունաբերության ուսումնասիրության համար գործադրվող ստատիստիկական մեթոդի ընդհանուր յեղանակները և առանձնահատուկ ձևերի (վորոնք բխում են արդյունաբերությունից, վորպես կենսական յերեւոյթներն առանձնահատուկ վորոտից) կիրառում, հետևաբար արդյունաբերական ստատիստիկայի դասընթացի հաջորդ մշակման անհրաժեշտ պայմանը՝ ստատիստիկայի ընդհանուր տեսությունից գիտնալն է: Վորպես ստատիստիկայի ընդհանուր տեսություն հետ ծանոթանալու միջնորդ, կարելի չէ նշել գիտելիքների այն կոմպլեքսը, վոր տեղաված է «Ստատիստիկայի տեսության հիմունքները» վերաբերյալ մի աշխատության մեջ («Վիդնո»-ի հրատ. մասն I և II):

Յենթադրելով, վոր ուսանողներն արդեն ծանոթ են ստատիստիկայի ընդհանուր տեսությանը, հեղինակն այս գլուխը կառուցելիս կանգ չի առել արդյունաբերական ստատիստիկայի բնորոշումների այնպիսի մանրամասնությունների վրա, ինչպես որինակ՝ ստատիստիկական հանրագումարների հասկացողությունն է, կամ թե ստատիստիկական մեթոդի ընդհանուր ճանաչողական յեղանակները շարադրությունն է: Այդ նույն նկատառումներով արդյունաբերական ստատիստիկան և հաշվապահության փոխհարաբերությունները վերաբերյալ հատվածները շարադրված են համառոտ:

Այն ուսանողները, վորոնք ստատիստիկական մեթոդի ընդհանուր բնորոշումների բնագավառում իրենց թույլ են զգում, զբաղվում են նախապես յերկրորդ անգամ մշակման յենթաբերկը «Ստատիստիկայի հիմունքները» դասընթացի I գլուխը:

Խոսելով արդյունաբերական ստատիստիկայի բնորոշման մասին, ուշադրություն պետք է դարձնել մի հանգամանքի վրա: «Ստատիստիկայի տեսության հիմունքները» դասընթացում մենք ստատիստիկական բնորոշում ենք (պրակտիկ գործունեություն իմաստով), վորպես մի աշխատանք, վորը կենսական յերեւոյթներն ուսումնասիրում է ճանաչողական այն յեղանակները ոգնությունը, վորոնց հանրագումարը հայտնի չէ ստատիստիկական մեթոդ անունով: Այլ կերպ ասած, այն-

տեղ մենք սահմանափակվեցինք լիկ ձևական բնորոշումով: Սակայն ստատիստիկական այդ ձևական բնորոշումը թույլատրելի չէ միայն այնքանով, վորքանով մենք խոսում ենք ստատիստիկայի մասին ընդհանրապես:

Խոսելով արդյունաբերական վիճակագրության մասին, մենք արդեն չենք կարող բավարարվել այդպիսի ձևական բնորոշումով և նրան պետք է ավելացնենք այդ վորոտի ստատիստիկական ուսումնասիրության գործունեության խնդիրները: Այդ պատճառով էլ ներկա գլխում հատուկ հատված նվիրված է սոցիալիստական շինարարության պայմաններում արդյունաբերական ստատիստիկայի առաջ ծառացած կոնկրետ խնդիրների պարզաբանմանը:

Արդյունաբերական ստատիստիկայի բնագավառում հաջող կերպով աշխատելու համար անհրաժեշտ գիտելիքների հարցը մենք շրջափեցինք բավականաչափ համառոտակի ձևով, հաշվի առնելով և՛ տեղի սղությունը և՛ հարցի պարզությունը: Այս հանգամանքն ուսանողին է հարկել չի ազատում վերոհիշյալ հարցի մասին ուշադիր կերպով մտածելու և նրանում խորամուկ լինելու պարտականությունից:

Խոսելով միասնական սոցիալիստական հաշվառման պրոբլեմի մասին, մենք անհրաժեշտ ենք համարում ընդգծելու, վոր անկախ 1932 թ. վերջին ամիսներում հաշվետվական ապարատների կազմակերպման մեջ տեղի ունեցած կառուցվածքային փոփոխություններից, այնուամենայնիվ տարբեր տեսակի հաշվառումների միացման պրոբլեմը վորպես այդպիսին՝ մնում է ակտուալ: Միասնական սոցիալիստական հաշվառման հարցը մշակելիս ուսանողը պետք է հիշի այն, ինչ այդ մասին ասված է «Ստատիստիկայի տեսության հիմունքները» դասընթացում:

Այս գլխի վերջին հատվածը ժողովրդատնտեսական ցուցանիշների սխեմայի արդյունաբերական ստատիստիկայի մեջ, ունի կրկնակի նպատակ. մի կողմից՝ նախնական ծանոթություն է տրվում հարցերի այն շրջանակի մասին, վորոնց լուսաբանությունը պետք է զբաղվի արդյունաբերական ստատիստիկան, իսկ մյուս կողմից՝ ծանոթություն է տրվում ներկա դասընթացի սխեմայի մասին: Հավանություն չունենալով մանրադնին կերպով ծանոթացնելու արդյունաբերական ստատիստիկայի առաջ ծառացած բոլոր պրոբլեմներին, այս հատվածն ուսանողին արդյունաբերական ստատիստիկայի (վորպես տեսական գիտելիքների) բովանդակության մասին տալիս է ավելի կոնկրետ ծանոթություն և զբաղում իսկ կարծես լրացնում ու զարգացնում է այն, ինչ վոր արված էր արդյունաբերական ստատիստիկայի ընդհանուր բնորոշմամբ ու սոցիալիստական շինարարության պայմաններում նրա ունեցած ընդհանուր խնդիրները պարզաբանմամբ:

Քանի վոր դասընթացի առաջին գլուխն ընդհանուր ներածություն բնույթ ունի, ուստի իր ամբողջ ծավալով պետք է մշակեն թե տեխնիկական և թե ինստիտուտի ուսանողները:

1. Խնչպես կարելի չի բնորոշել արդյունաբերական ստատիստիկան (պրակտիկ գործունեություն իմաստով), հաշվի առնելով սոցիալիստական շինարարության պայմաններում նրա առաջ դրված խնդիրները:

2. Արդյունաբերական ստատիստիկայի խնդիրներն արդյո՞ք սահմանափակվում են արդյունաբերությունում պլանային առաջադրանքների կատարման վերաբերյալ դիտումներ ունենալով:

3. Խնչո՞ւ արդյունաբերական հաշվապահություն հետ մեկտեղ անհրաժեշտ է ունենալ նաև արդյունաբերական ստատիստիկա:

4. Խնչից է բխում տրեստի և գործարանի վարչության ապարատի այլ մասերից ստատիստիկական առանձնացնելու անհրաժեշտությունը:

5. Ճիշտ կլինի՞ արդյո՞ք արդյունաբերական ստատիստիկայի դժուր հաշվետվության ծավալը վերջինից, յեղակեա ունենալով նախնական վաստակագրության վիճակը:

Գ Ր Ա Վ Ա Ն Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

1. Լենին ին՝ «Մոսկովյան իշխանության հերթական խնդիրները», III հրատ., հատ. 22-րդ:

2. Ստալին ին՝ «Նոր պայմաններ, անտեսական շինարարության նոր խնդիր»:

3. Ռոտշտեյն ին՝ «Սոցիալիստական արդյունաբերությունում ստատիստիկայի հիմունքները», 1-ին գլուխ:

4. Ռոտշտեյն ին՝ «Խնչ է նշանակում հաշվառում»:

5. » «Ստատիստիկա», Կոմակազեմեյայի բերդադի կազմած դասագիրքը, 2-րդ գլուխ:

Գլուխ II

ԴԻՏՄԱՆ ՄԻԱՎՈՐՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՎԵՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

ԴԻՏՄԱՆ ՄԻԱՎՈՐԻ ՀԱՐՑԻ ՅՈՒՐԹՅՈՒՆՆ ՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԸ

Արդյունաբերական ստատիստիկայի գոյությունը պայմանավորված է արդյունաբերության (վորպես տնտեսական յերևույթների հատուկ գոյության) առանձնահատկությամբ, վորից բխում է նրա ուսումնասիրության պրիոմները մասնագիտացումը:

Արդյունաբերության ուսումնասիրության ժամանակ ծագող պրոբլեմները առանձնահատկությունն ու այդ պրոբլեմները լուծման առանձնահատկությունը յերևան է դալիս ստատիստիկական աշխատանքի (արդյունաբերության ուսումնասիրման) հենց առաջին ստադիայում, ստատիստիկական դիտումներ կազմակերպելու ստադիայում: Արդյունաբերական ստատիստիկայի աշխատանքներում ստատիստիկական դիտումներ կազմակերպելու ժամանակ յերևան յեկող հիմնական հարցը — դիտման միավորի հարցն է:

Ընդհանրապես ստատիստիկայի մեջ դիտման միավորը տակուլ բնորոշված է հասկանալ այն յեզակի որյեկսք, վորի վրա դիտումների պրոցեսում անմիջականորեն ուղղվում է այս կամ այն հանրագումարն ուսումնասիրող դիտողի ուսարթությունը: Դա ստատիստիկական կոլլեկտիվի այն բաղկացուցիչ մասն է, վորի նշանները գրանցվում են դիտման պրոցեսում, նպատակ ունենալով այդ նշաններն ուսումնասիրել:

26 ամբողջ կոլլեկտիվի շրջանակներում:

Բարդ են և չափազանց բաղկացվածանի այն հանրագումարները, վորոնց հետ գործ ունի արդյունաբերական ստատիստիկան: Հենց դա յն պատճառը, վոր ստատիստիկայի այդ ճյուղում դիտման հանրագործ միջնամի հարցի լուծումը կապված է այնպիսի գծվարությունների հետ, վորոնք նշանակալի չափով բացակայում են ստատիստիկայի մյուս ճյուղերում (յերբ լուծված է դիտման միավորի հարցը):

Նախքան արդյունաբերական ստատիստիկայի մեջ դիտման միավորի հարցի լուծման հետ կապված «կոնկրետ գծվարություններին ծանոթանալը, կանգ առնենք այդ հարցի ելույթյան վրա, անկախ մեր առաջ դրված անմիջական խնդրից:

Դիտման միավորի հարցի ճիշտ լուծման նշանակությունը պայմանավորված է ստատիստիկական մեթոդի (վորպես հանրագումարներ ուսումնասիրող մեթոդի) բովանդակությամբ: Միանգամայն պարզ է, վոր ստատիստիկական հանրագումարը վորպես այդպիսին, ներկայացնում է այնպիսի հավաքական խումբ, վորը շնորհիվ յր քանակական ու վորակական բարդության, մեր դիտական յեզակի գործողությունում այն ամբողջությամբ ըմբռնել չեն կարող:

Խնչպես յր՝ հանրագումարի ֆիզիքական հատկությունների, այնպես էլ մեր ճանաչողական ապարատի սահմանափակության շնորհիվ, մենք հանրագումարը կարող ենք դիտել վնչ այլ կերպ, քան նրա բաղկացուցիչ մասերը դիտելով: Այստեղից բխում է մի շատ կարևոր հանգամանք, վոր հանրագումարների ուսումնասիրության ժամանակ, մեր ճանաչողության սինտետիկ աշխատանքին միշտ պետք է նախորդի տնայիտիկ (վերլուծական) աշխատանքը. նախ քան այն հարցը վորոշելը, թե յրենից ինչ է ներկայացնում մեզ հետաքրքրող հանրագումարն ամբողջությամբ առած, մենք ամեն անգամ պետք է վորոշենք այն հարցը, թե ինչպիսի բաղկացուցիչ մասերից է կազմված տվյալ հանրագումարը, վոր հետո նկարագրենք բաղկացուցիչ մասերը և, վերջապես, աշխատանքի միայն հետագա ստադիաներում դիմենք այս կամ այն բնդհանրացող հետևություններին: Այսպիսով, անմիջական դիտման որյեկտի բնարություն հարցը, ըստ ելույթյան, վեր է ածվում հանրագումարը բաղկացուցիչ մասերի տրոհելու սահմանների հարցի: Յեվ տկնրախ և, վոր ստատիստիկական աշխատանքի վերջին հատված, յեզակի որյեկտները նկարագրության նյութերից բնդհանրացող հետևություններ — կարող է ճիշտ արդյունք տալ միայն այն դեպքում, յեթե ճիշտ է լուծված հանրագումարի բաղկացուցիչ մասերի հարցը: Սակայն այս հարցը յր հերթին սերտորեն կապված է հանրագումարի տրամաբանական ելույթյան հետ:

Ստատիստիկայի մեջ ընդունված է հանրագումար անվանել այնպիսի խումբ՝ յեզակի որյեկտներ, վորոնք ոժաված են բոլորի համար բնդհանուր քանակական կամ վորակական բաղմատասկություն հատկանիշներով: Այստեղից հետևում է, վոր հանրագումարի բաղկացուցիչ մասը միշտ պետք է համարվի այն յեզակի որյեկտը, վոր այդ հատկանիշն ունի:

Դիտման միավորի հարցի հետ կապված կոնկրետ խնդիրները, յուրաքանչյուր առանձին դեպքում՝ պահանջում են:

1. Ընդունել դիտման այնպիսի միավոր, վորը համապատասխանի ուսումնասիրության ալյալ կոնկրետ նպատակներին,

2. Ընտրված դիտման միավորի հատկանիշը սահմանել այնպիսի պարզորոշությամբ, վորը վերացնի ալյալ դիտման միավորը մի այլ միավորի հետ շփոթելու հնարավորությունը:

ԴԻՏՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐ ՄԻԱՎՈՐՆԵՐՆ ԱՐԴՅՈՒՆԱՐԵՐԱԿԱՆ ՍՍՏՅՈՒՄՆԵՐԻ ՄԵՋ

Իժվար չե համոզվել, վոր միևնույն հանրադրումների ուսումնասիրության ժամանակ դիտման միավորի հարցը կարող ե լուծվել տարբեր կերպով: Վերցնենք թեկուզ այնպիսի հանրադրումար, ինչպիսին արդյունաբերությունն ե: Արդյունաբերությունը կարելի յե համարել վորպես միավորումների (և նրանց իրավունքներով ոգտվող արեսանների) հանրադրումար և վորպես արտադրական ձեռնարկությունների (ֆարքիկ-գործարանների) հանրադրումար: Առաջին դեպքում մենք արդյունաբերությունը բաժանում ենք ալելի մեծ մասերի, իսկ յերկրորդ դեպքում՝ ալելի փոքր մասերի: Սակայն այդ մասնատրումը մենք կարող ենք շարունակել և արդյունաբերությունը դիտել վորպես ցեխերի հանրադրումար, կամ թե բանվորական բրիգադների հանրադրումար և այլն: Վերը բերած յուրաքանչյուր դեպքումն ել միևնույն հանրադրումարը (արդյունաբերությունը) մեր կողմից մեկնաբանվում և վորպես մասնատրած տարբեր բաղկացուցիչ մասերի գումար: Յեւ այդ ստորաբաժանումներից յուրաքանչյուրը մեզ կարող ե ալ դիտման տարբեր միավոր. քա վորում, նայած ուսումնասիրության կոնկրետ նպատակներին, մենք կարող ենք ընդունել դիտման այս կամ մի ուրիշ միավոր:

Դիտման միավորի ընտրության հարցի լուծման համար, վորպես ընդհանուր կանոն, յուրաքանչյուր կոնկրետ դեպքում կարելի յե ձևակերպել հետևյալ պահանջը. վորպես դիտման միավոր պետք ե ընդունել մեռ ուսումնասիրելի հանրադրումարի այնպիսի մասնիկը, վորի մեջ վերոնկառ ձևավորում ե ստանում սլյալ դեպքում մեզ հետաքրքող յերևույր:

Յեւնելով հենց նոր ձևակերպված ընդհանուր կանոնից, վորձենք լուծել դիտման հնարավոր միավորների հարցը՝ արդյունաբերական ստատիստիկայի մեջ:

Ինչպես արդեն նշեցինք, դիտման միավորի ընտրությունն ամբողջապես կախված ե ուսումնասիրության կոնկրետ խնդիրներից:

Ասենք թե մեզ հետաքրքրում ե արդյունաբերության արտադրական աշխատանքի արդյունքները: Յեւնելով վերևում ձևակերպված ընդհանուր կանոնից, մենք վորպես դիտման միավոր պետք ե ընդունենք արտադրական ձեռնարկությունը (ֆարքիկա, գործարան, հանքահոր և այլն), վորպես այնպիսի միավոր, վորի շրջանակներին մեջ արտադրական պրոցեսն ստանում ե իր վերջնական ձևավորումն, այսինքն, վորի սահմաններում վերջնականապես գրեկտրվում են արտադրական պրոցես-

սի արդյունքները: Նրանց վերադաս որդանը (տրեստը կամ միավորումը) ձեռնարկությունն այդ արտադրական աշխատանքի արդյունքներին այլ ևս վոչինչ չի ալելացնում: Իսկ մյուս կողմից ձեռնարկության բաղկացուցիչ մասնիկները (ցեխերը, բանվորական բրիգադները) կատարում են այն արտադրական պրոցեսի մի մասը, վորը վերջնական ձևավորում ե ստանում արտադրական ձեռնարկության շրջանակներում (ամբողջությամբ վերցրած):

Այժմ յենթադրենք, վոր մեզ հետաքրքրում ե վոչ թե արտադրությունը, այլ արդյունաբերական արտադրանքի վաճառահանումը: Դեկավարվելով դիտման միավորի վերաբերյալ նույն ընդհանուր կանոնով, մենք վորպես դիտման միավոր, ալինայանի յե, կվերցնենք այնպիսի արդյունաբերական միավոր, վորի շրջանակներում գրեկտրվում ե վաճառահանման չափը. այլ կերպ ասած, պետք ե վերցնենք այնպիսի անտեսական միավոր, վորն արտադրանքը շուկա դուրս բերելու վտարերյալ գործող որենտրությունն համաձայն այդպիսի անտեսական միավոր ե հանդիսանում միավորումը (կամ վերջինիս իրավունքներով ոժտված տրեստը): Հետևաբար, միավորումը (կամ համապատասխան տրեստը), արդյունաբերական արտադրանքի վաճառահանումն ուսումնասիրելիս, պետք ե ընդունվի վորպես դիտման միավոր: Հենց այդ պահանքն պետք ե հապեղավել վաճառահանման չափերի, կոտրագենտների (գործակալների) մեջ և վաճառահանումը բաշխելու հարցերը և այլն: Արտադրական ձեռնարկությանն այդ հարցերի ուղղումն, ալինայանի յե, վոր համապատասխան եֆֆեկտ չեր աա, քանի վոր մի շարք դեպքերում ձեռնարկությունն այդ հարցերին չեր կարող պատասխան տա:

Այժմ յենթադրենք, վոր մեզ հետաքրքրում ե այնպիսի յերևույթ, ինչպիսին ե ցեխերը անահաշվարկի փոխադրելու արդյունքները: Այստեղ մենք գործ ունենք այնպիսի յերևույթի հետ, վորի ուսումնասիրության ժամանակ վորպես դիտման միավոր կարող ե ընդունվել ցեխը. վերջինս այնպիսի միավոր ե, վորի շրջանակներում պարզվում ե այն, ինչ վոր մեզ ալյալ դեպքում հետաքրքրում ե:

Վերջապես այն դեպքերում, յերը մեզ հետաքրքրում ե ձեռնարկության ալելի փոքրիկ (բանվորական բրիգադ և այլն) մասնիկում տեղի ունեցող և ձևավորվող յերևույթ, ապա այդ դեպքում վորպես դիտման միավոր պետք ե ընդունվի ձեռնարկության այդ մասնատրված մասնիկը:

Բերած որինակներով չեն սպառվում դիտման այն բոլոր հնարավոր միավորները, վորնք կարող են գոյություն ունենալ արդյունաբերական ստատիստիկայի աշխատանքներում: Շատ հաճախ արդյունաբերական ստատիստիկան հետաքրքրվում ե վոչ թե արդյունաբերությամբ, վորպես այդպիսին, այլ արդյունաբերության շրջանակներում տեղի ունեցող մասսայական վորեւ յերևույթներով: Վորպես որինակ կարելի յե բերել հետևյալ յերևույթները (վորոնցից յուրաքանչյուրը

կարող ե համարվել յուրատեսակ ստատիստիկական կոլլեկտիվ). դրանք են բանվորներին աշխատավարձը, աշխատանքի արտադրողականությունը, ձեռնարկութեան սարքավորումը, անձնակազմը, բանվորներին հետ տեղի ունեցող դժբախտ պատահարները և այլն: Այս կոլլեկտիվները յուրաքանչյուրի ուսումնասիրութեան ժամանակ ակնհայտնի չեն, վոր վորպես դիտման միավոր կծառայի այդ կոլլեկտիվի այն մասը, վորի (մասի) շրջանակներում գրանցվում է մեզ հետաքրքրող այս կամ այն հատկանիշը (մի հատկանիշ, վորը տարբերակված է առանձին որակա- ներում և ամբողջ կոլլեկտիվի բնութագրման ժամանակ յենթակա չե ընդհանրացման):

Վերևում մեր ամբողջ ասածներից կարելի չե այն հետևութեանն անել, վոր նայած հետադոտութեան նպատակներին և ուսումնասիրվելիք յերևութի բնութիւն, արդյունաբերական ստատիստիկան կարող և ընտրել դիտման ամենաբազմազան միավորները:

Դիտման միավորից պետք է զանազանել հաշվետվական միավորը, վորի անվան տակ մենք հասկանում ենք այն որպանը, վորին ուղղում ենք մեզ հետաքրքրող այս կամ այն յերևութի վերաբերյալ հարցերը: Հաշվետվական միավորը կարող է չզուգահեռել դիտման միավորին հետ: Այսպես, որինակ, աշխատավարձն ուսումնասիրելու ժամանակ դիտման միավորը կլինի առանձին բանվորի աշխատավարձը, իսկ հաշվետվական միավորը կարող է լինել վնչ թե առանձին բանվորը, այլ այն արտա- դրական ձեռնարկութեանը, վորտեղ նա աշխատում է. ցեխերի անտ- հաշվարկի եֆեկտաւորութեանն ուսումնասիրելիս դիտման միավորն է անահաշվարկային ցեխը, իսկ հաշվետվական միավորն այդ դեպքում կարող է լինել նաև արտադրական ձեռնարկութեանը:

Հաշվետվական այս կամ այն միավորի ընտրութեան հարցը կա- րող է լուծվել տարբեր կերպ: Տվյալ դեպքում, վորպես ընդհանուր դե- կավոր ցուցում, պետք է հիշատակել, վոր իբրեւ հաշվետվական միա- վոր, դերադասելի չե վերցնել այն որպանը, վորն ավելի մոտ է կանգ- նած մեզ հետաքրքրող յերևութիւն և նրա մասին ունի ամենից հավաս- արի ավյալներ: Սակայն այս հարցի վորոշման ժամանակ մեծ դեր են խաղում նաև մյուս գործնական նկատառումները, ինչպիսիք են՝ թեղ- թակեցները թվի կրճատման և դրանով իսկ նյութի ամփոփումն պար- դեցնելու ձգտումը և այլն:

ԸՆՏՐՈՒՄ ԳԻՏՄԱՆ ՄԻԱՎՈՐԻ ԶԻՇՏ ՎՈՐՈՇԵԼՈՒ ԱՆՀՐԱՎԵՏՏՈՒԹՅՈՒՆԸ

Ստատիստիկական դիտումի այս կամ այն միավորի ընտրութեան հարցի լուծմամբ չի սպառվում դիտման միավորի հարցը: Ստատիստի- կական հետադոտութեան դրվածքի վորձը ցույց է տալիս, վոր նույն- իսկ առաջին հայացքից միանգամայն պարզ այնպիսի հասկացողու- թյուններ, ինչպիսիք են «ընտանիք», «գյուղական ծուխ», «ընտանի- քի գլուխ», հետադոտութեան պրոցեսում մնում են չպարզված: Ավելին. պետք է հավատարի այնպիսի պարզ թվացող հասկացողութեանների բովանդակութեան անորոշութեան մասին, ինչպիսիք են «արտադրական

ձեռնարկութեան», «ցեխ» և այլ այնպիսի միավորներ, վորոնց հետ դործ է ունենում արդյունաբերական ստատիստիկան:

Այստեղից բխում է այն անհրաժեշտութեանը, վոր ընտրված միավորի ճշգրիտ վորոշման միջոցով, ամեն անգամ, յերբ ստատիստի- կական աշխատանքներում նրանով ոգտվելու կարիք է լինում՝ ապահո- վել համադաստիստի հասկացողութեան միանգամայն իդենտիկ (նույ- նական) ըմբռնումը:

Վորպես ակնառու օրինակ այն բանի, թե ինչ դժվարութեաններ և հարուցում ստատիստիկայի, իբր թե հանրաժանութ վորոշակի անը- միներին բացակայութեանը, կարող է ծառայել այն դժվարին դրու- թյունը, վորի մեջ գտնվեց Վ. Ի. Լենինը՝ Ռուսաստանում կապիտա- լիզմի զարգացումը հետադոտելու իր աշխատանքում: Այդ հետադոտու- թյան պրոցեսում նրա առաջ ծառացած խնդիրներից մեկն այն էր— հետևել մինչև պատերազմյան Ռուսաստանում ֆարրիկաների և գործա- րանների թվի փոփոխութեաններին, այլ և հետևել նրանց չափերի դե- նամիկային ըստ նրանցում զբաղված բանվորների թվի ու արտա- դրանքի: Դիմելով ֆարրիկաների ու գործարանների վերաբերյալ կա- ուսվորական ստատիստիկական ավյալներին, Վ. Ի. Լենինը դեմ առավ այդ ավյալներին ոգտագործման լիակատար անհնարինութեանը. միայն նախնական, չափից դուրս քրանաջան ուղղումներից հետո կարելի չե որդադործել այդ ավյալները: Խնդիրն այն է, վոր «ֆարրիկ» հասկա- ցողութեանը զանազան կերպ էր հասկացվում վնչ միայն ստատիստի- կական տարբեր ժողովածուներում, այլ և միևնույն ժողովածուի մեջ՝ ըստ տարբեր նահանգների: Ահա 1866 թ. «Ռուսական կայսրութեան ստատիստիկայի ժամանակագրի» առաջաբանից Վ. Ի. Լենինի կողմից բերված ցիտատը.

«Նույնիսկ տարբեր նահանգների համար գոյութեան չունի նույ- նանման ընտրելունն այն բանի, թե ինչը պետք է համարել ֆարրիկա և գործարան, քանի վոր շատ նահանգներ ֆարրիկաների ու գործա- րանների թվի մեջ հաշվում են որինակ հողմադացները, աղյուս թրճե- լու հնոցները և արդյունաբերական մանր ձեռնարկները. իսկ վորոշ նահանգներում վերահիշյալները դուրս են դրում հաշվից, վորի հետե- վանքով տարբեր նահանգներում յեղած գործարանների ու ֆարրիկա- ների ընդհանուր թվի ցուցումը կորցնում է իր նշանակութեանը*):

Թե ինչ հետևանքի յեր բերում ֆարրիկ-գործարանի այդպիսի վոշ միանման հասկացողութեանը, յերևում է միևնույն հարցի մասին (ֆարրիկաների թվի, նրանցում զբաղված բանվորների թվի և արտա- դրանքի) համադրվող հետևյալ ավյալներից, վոր Վ. Ի. Լենինը վերցրել և տարբեր աղբյուրներից.

*) Վ. Ի. Լենինի՝ «Կապիտալիզմի զարգացումը Ռուսաստանում», Յերկերի ժո- ղովածու, 3-րդ հրատ., հատ III, էջ 355:

Ա Ղ Բ Յ Ո Ւ Ր Ն Ե Ր	Թ Ի Վ Ը		Արտադրութ. գում. հաղ. ուղ.
	Փարբիկա- ների	Գործարան- ների	
Ռուսաստանի տեղեկությունների ժողո- վածու	54 179	559,476	569.705
Սովետական միության և մանուֆակտուրայի զեկաբրտա- մենտի հավաքածու	14.761	499.682	672.079

Յեթե նկատի առնենք, վոր աղյուսակում բերված տվյալները մասնավորապես վերաբերում են միևնույն տարվանը (1835 թ.), ապա միանգամայն պարզ է, վոր ֆարբիկաների թվի միջև յեղած զանազա-
նությունը վոչ մի անտեսական պրոցես չի արտացոլում, այլ ամբող-
ջապես բացատրվում է ֆարբիկա ֆեմինի հասկացությունը մեջ յեղած
այն փոփոխությունները, վորի մասին խոսում է վերը բերած ցիտատը:

Այս օրինակից բղիթող պրակտիկ հետևությունն այն է, վոր ա-
մեն անգամ ստատիստիկական զեկում է կազմակերպելիս, մեր կողմից
ընտրված զիտման միավորի (և մասնավորապես արտադրական ձեռ-
նարկություն, վորպես հիմնական միավորի) համար սահմանվեն այն-
պիսի պարզորոշ հատկանիշներ, վորպեսզի այդ հատկանիշները հիման
վրա հնարավոր լինի միանգամայն հստակորեն պատասխանել այն հար-
ցին, թե՞ վերջում է վերջանում այս միավորը և վերջում է սկսում
մյուսը, վերն է ձեռնարկություն և նրա բազմազան ժամանակ միջև յե-
ղած սահմանը:

ԱՐՏԱԳՐԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՆՐԱ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԻ ՀԱՍԿԱ-
ՅՈՂՈՒԹՅԱՆ ԲՆՈՐՈՇՈՒՄԸ — ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ
ԱՏԱՏԻՍՏԻԿԱՅԻ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻՆԵՐՈՒՄ

Արտադրական ձեռնարկություն հասկացությունը ընտրող ման հար-
ցը մեր արդյունաբերական ստատիստիկայի մեջ իր պատմությունն
ունի:

Ինչպես վերը նշեցինք, ռուսական կայսրության մինչպատերազ-
մյան արդյունաբերական ստատիստիկան հոգ չէր տանում արտադրա-
կան ձեռնարկության վորպես զիտման միավորի բնորոշման մասին:
Առաջին անգամ զիտման միավորի ճշման հարցը զբվեց 1900 և 1908
թվականներին՝ Վ. Յե. Վարդարի զեկավարությամբ անցկացված ար-
դյունաբերական վիճակագրության ժամանակ:

Այդ վիճակագրությունների ժամանակ վորպես զիտման միավոր
ընդունվում էր արտադրական ձեռնարկությունը*), վորպես անտեսա-
կան միասնություն Սակայն այդ վիճակագրությունների բլանկները
լրացնելու վերաբերյալ հրահանգներում անշատ արտադրական ձեռ-
նարկությունների հատկանիշները չեն նշվում: «Գործնականորեն —

*) Մինչ հեղափոխական, ինչպես խորհրդային շրջանի առաջին տարիներ
ստատիստիկան, այժմ ընդունված «արտադրական ձեռնարկություն» տերմինի փոխա-
րեն ոգտադրվում էր «արտադրական հիմնարկ» տերմինը: Այդ նույն նշանակությամբ
32 գործ էր անվանում նաև «արդյունաբերական ձեռնարկություն» տերմինը:

առում է այդ մասին Վ. Յե. Վարդարը — յուրաքանչյուր հիմնարկու-
թյան անշատ լինելը վորոշվում էր անհետապին հարցումի ժամանակ,
հիմնարկություն ինքնորոշման միջոցով, իսկ հետո միայն յուրաքան-
չյուր թերթիկի մշակման և խմբագրության միջոցին ծագած խնդրու-
ները լուծվում էին վերջնականապես*):

Մեր արդյունաբերական ստատիստիկայի պատմության մեջ ա-
ռաջին անգամ «արդյունաբերական հիմնարկ» (արտադրական ձեռնար-
կություն) հասկացությունը բնորոշումը պատկանում է Կենտրոնական
Ստատիստիկական Վարչությանը (ԱՄՍ): Դժբախտաբար բնորոշման
այդ առաջին փորձն ունեւր էյական բացեր:

«Արդյունաբերական հիմնարկ տակով — կարգում ենք արդյու-
նաբերական ընթացիկ ստատիստիկայի վերաբերյալ Կենտրոնական
մինչև 1925 թվականի հրահանգներում — հասկացվում է գործարան,
ֆարբիկա, արհեստանոց, հանքահոր և այլ ձեռնարկություններ, վո-
րոնք պատկանում են մի սեփականատիրոջ, գտնվում են մի հողամա-
սում և ողավում մի ընդհանրական մեքենայական ուժից:

«Յեթե միևնույն հողամասում կա կաշեգործարան և վոտնամանի
արհեստանոց, վորոնք ողավում են մի ուժակայանից, ապա աղյուսի
ձեռնարկությունը համարվում է վորպես մեկ արդյունաբերական հիմ-
նարկություն՝ յերկու ինքնուրույն արտադրությունների: Տերմինու-
թյան ընդհանրության բացակայության դեպքում յուրաքանչյուր հիմ-
նարկություն զրանցման է յենթարկվում առանձին-առանձին, յեթե
նույնիսկ նրանք մտնում են մեկ արդյունաբերական ձեռնարկության,
այսինքն՝ մեկ ֆիրմանական ու վարչական կառավարչությամբ զեկա-
վարվող կազմակերպության կազմի մեջ»:

Կենտրոնականի հին հրահանգների հիշյալ ցուցումներում անշատ
արտադրական ձեռնարկության համար սահմանված են յերեք հնարա-
վոր հատկանիշներ.

1. Միևնույն սեփականատիրոջ պատկանելը,

2. Անշատ հողամասում գտնվելը և

3. Մեքենական ենթակայի աղբյուրի անշատ լինելը:

Դժվար չի համոզվել, վոր անշատ արտադրական ձեռնարկության
համար թված հատկանիշներից վոչ մեկը չի կարող հաջող համարվել:

Մի սեփականատիրոջ հատկանիշը ժամանակակից արդյունաբե-
րության համար միանգամայն անորոշ է. այժմ միանգամայն տարրի-
նակ է այն հարցը, թե՞ ով է հանդիսանում պետական արդյունաբե-
րական ձեռնարկությունների տերը: Յեթե նորից դառնանք Կենտրոնակա-
նի (ԱՄՍ) նույն հրահանգների արդեն մյուս կետերի բովանդակու-
թյանը, ապա մենք այնտեղ կգտնենք ցուցում այն մասին, վոր ստա-
տիստիկական բլանկների այդ կետում (ձեռնարկության տիրոջ վերա-
բերյալ) մասնավոր անձանց համար զբվի տիրոջ աղյանունը, իսկ պե-
րերյալ) մասնավոր անձանց համար զբվի տիրոջ աղյանունը, իսկ պե-

*) Վ. Վարդար՝ «Արդյունաբերական ստատիստիկայի հիմունքն. ակնարկ»,
մասն I, էջ 59:

տական արտադրական ձեռնարկները համար հիշատակվի այն տրեստի կամ հիմնարկության անունը, վորի վարույթում գտնվում է ձեռնարկությունը: Բայց չէ՞ վոր այն բոլորը, ինչվոր մեկ տրեստի տիրապետությունը չի գտնվում, չի կարելի մեկ արտադրական ձեռնարկություն համարել: Վերը բերած ցիտատի վերջին մասում, ճիշտ է, առաջարկվում էր արդյունաբերական միավորություններում, վորպես առանձին արտադրական ձեռնարկություններ զրանցել ավարտված, պատրաստի արտադրանք բաց թողնող յուրաքանչյուր արդյունաբերական միավոր», սակայն այստեղից էլ կարծես թե հետևում էր, վոր կիսաֆաբրիկատ բաց թողնող ֆաբրիկաները չպետք է համարվեյին առանձին արտադրական ձեռնարկություններ:

Անշատ արտադրական ձեռնարկության համար վորպես հատկանիշ պակաս անհաջող չէ նաև տերրիտորիալ անջատվածության (մեկ հողամասում գտնվելը) հատկանիշը: Ինչ է հողամասը: Յեթե քաղաքի յերկու հարևան թաղամասերում գտնվում է մի գործարան, ապա պետք է այդպիսին համարել մեկ հողամասում գտնվող, թե վոր Ակնհայտ է, վոր անշատ արտադրական ձեռնարկության հատկանիշների հարցի լուծմանը չի ոգնում նաև տերրիտորիալ ընդհանրություն հատկանիշը, քանի վոր վերջինս էլ իր հերթին մնում է անսորո:

Վերջապես, արտադրական ձեռնարկության՝ Կենսովիճվարի նախկին պրակտիկայով առաջարկվող առանձնություն յերբորդ հատկանիշը, այն է՝ մեքենական ուժից ոգտվելու ընդհանրությունը, նույնպես հանդիսանում է վոր բավականաչափ հաջոր Ակնհայտ է, վոր մեքենական ուժից ոգտվելու ընդհանրությունը լինում է այն դեպքում, յերբ տարբեր արտադրական ձեռնարկությունները (որինակ՝ Մոսկովոլեյի ֆաբրիկան, Մոսպոլիգրաֆի ապարանը և այլն) ելեքտրոնիկայի յին ստանում միևնույն կայանից (ՄՈՒԵՍ-ից): Ինքնին պարզ է, վոր այդ հանգամանքը դեռ բավական չէ նրանց մեկ ձեռնարկություն համարելու համար: Հատկապես նույնպես հնարավոր է, յերբ մի մեծ գործարանի առանձին մասերն ունեն մի քանի ուժակայաններ, կամ, որին նաև, յերբ գործարանի մի մասը սնվում է իր շարժիչների եներգիայով, իսկ մյուս մասը գործ է ածում դրանց ստացված եներգիա: Հասկանալի չի, վոր այս փաստը բավական չէ, վոր այդպիսի գործարանի առանձին մասերը համարվին ինքնուրույն արտադրական ձեռնարկություններ:

ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿԱՌԹՅԱՆ ՀԱՍԿԱՑՈՂՈՒԹՅԱՆ ԲՆՈՐՈՇՈՒՄԸ
ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՍՏԱՏԻՍՏԻԿԱԹՈՒՄ ԶԵՎ. ՊԼԱՆԱՅԻՆ ՊՐԱԿՏԻԿԱԹՈՒՄ

Արտադրական ձեռնարկության հասկացողության այն անբավարար բնորոշումը, վոր տեղ էր գտել Կենսովիճվարի (ԱԿՄ) առաջին հրահանգներում, ստիպում էր մտածել այդ բնորոշման ճշտման մասին: 1926 թ. վերջին տարեկան վիճակագրական բլանկի լրացման մասին արված շրջաբերականում Կենսովիճվարն առաջին անգամ սահմանում է արտադրական ձեռնարկության (արդյունաբերական հիմնարկի) քիչ

թե շատ պարզորոշ հատկանիշներ, վորոնք մինչև այժմ էլ ընդունված են արդյունաբերության ստուգիչ թվեր կազմելու վերաբերյալ հրահանգներում և արդյունաբերական ստատիստիկայի հաշվետվական ձևվերը լրացնելու համար արված հրահանգներում:

Կենսովիճվարի 1925 թ. շրջաբերականը խոսում է դիտման յերեք հնարավոր միավորների մասին. դրանք են՝ արդյունաբերական ձեռնարկությունը, արդյունաբերական հիմնարկությունը (արտադրական ձեռնարկությունը) և արտադրությունը (ավելի ճիշտ՝ ցեխը):

«Արդյունաբերական ձեռնարկություն» — ասված է շրջաբերականում — հասկացվում է այն տնտեսապես ինքնուրույն միավորը (առարեստ, կոմբինատ, միավորում, ինքնավար ֆաբրիկա և այլն), վորն իրավունք ունի ինքնուրույնաբար կատարելու ֆինանսական ու մթերական գործառնություններ և իր արտադրանքի իրացման գործառնություններ, ունի ոգուտնիքի ու վնասների ավարտված հաշվեկշիռ»:

Ինչպես արդեն վերը նշված է, արդյունաբերական ձեռնարկությունը (միավորում, արեստ) պետք է ընդունվի վորպես դիտման միավոր այն ժամանակ, յերբ հենց այդ միավորի շրջանակներում էլ իրենց վերջնական ձևավորումն են ստանում մեր ուսումնասիրելիք յերևույթները (այսպես, որինակ, արդյունաբերական արտադրանքի իրացումը, մթերման գործունեությունը և այլն):

Կենսովիճվարի վերը հիշատակված շրջաբերականն առաջարկում է արտադրական ձեռնարկություն համարել արդյունաբերական ձեռնարկության (ֆաբրիկայի, գործարանի և այլն) վարչականորեն այնպիսի առանձնացած մասը, վորի վարչական առանձնացվածությունը պայմանավորված է արտադրատեխնիկական միասնությամբ: Այսպիսով առաջարկվում է ինքնուրույն արտադրական ձեռնարկության հատկանիշներ համարել՝

1. Վարչական առանձնացվածությունը և
2. Արտադրատեխնիկական միասնությունը:

Հետագայում այդ նույն շրջաբերականը զարգացնում է առանձնացած ձեռնարկության յերկու հատկանիշների բովանդակությունը հետևյալ կերպ. «Վարչական առանձնացվածությունը վորոշվում է հետևյալ հատկանիշների առկայությամբ՝ 1. հատուկ վարչական ղեկավարություն, 2. արտադրական հաշվապահության ավարտված սխեման»:

«Արտադրատեխնիկական միասնությունն ասելով հասկացվում է հիմնարկության առանձին մասերի միմյանց հետ ունեցած կապը, վորն արտահայտվում է կամ՝ ա) պրոդուկտի պատրաստման ստադիաների հաջորդականությամբ, կամ՝ բ) արտադրական պրոցեսի միատարրությունը (այսինքն հիմնարկության ստորեր մասերում միևնույն պրոդուկտի արտադրությունը), կամ թե՛ գ) հիմնական ու ոժանդակ արտադրությունների փոխադարձ կապվածությունը»:

Ամենից առաջ կանգ առնենք «հատուկ վարչական ղեկավարություն» հատկանիշների վրա: Միանձնյա ղեկավարության պայմաններում լիակատար վարչական ղեկավարությունը կենտրոնացած է ձեռ-

նարկութեան դիրեկտորի ձեռքում: Այսպիսով, արտադրական ձեռնարկութեան արանձնացածութեան արտաքին հատկանիշը՝ հատուկ դիրեկտորի յենթարկվելն է: Սակայն հնարավոր են այնպիսի դեպքեր, յերբ միևնույն անձնավորութիւնը, համատեղութեան կարգով, յերկու կամ նույնիսկ մի քանի ձեռնարկութիւններին դիրեկտոր է: Սխալ կլինէր այդ մի քանի ձեռնարկութիւնները համարել մի ձեռնարկութիւն միայն այն պատճառով, զոր նրանց գլխավորում է մի անձնավորութիւն: Ամենից առաջ այստեղ գոյութիւն ունի վարչական առանձնացածութեան միայն մի հատկանիշը (դեկլարութեան միասնութիւնը), իսկ յերկրորդը — արտադրական հաշվապահութեան ավարտված սխտեմը՝ դեռ չկա: Հաշվապահութեան այդ ավարտված սխտեմի արտաքին հատկանիշը՝ ոգուտներն և ֆուսներն հաշվի առնելով յոյնն է: Ոգուտներն և ֆուսներն առկայութիւնը զանազանում է արտադրական ձեռնարկութեան հաշվետվութեան սխտեմը ցեխային հաշվապահութիւնից, իսկ հաշվետարութեան զուտ-արտադրական բնույթը՝ արտադրական ձեռնարկութեան հաշվապահութիւնը զանազանում է տրեստի ու միավորումի հաշվետվութեան սխտեմից, վորտեղ արտացոլում է վրչ միայն արտադրական գործունեութեան արդիւնքը, այլ և առևտրական գործունեութեան արդիւնքը:

Այսպէս ուրեմն, միայն արտադրական հաշվետվութեան վարչական դեկլարութեան առկայութիւնն է, զոր տվյալ կոնկրետ դեպքում հիմք են տալիս խոսելու միասնական և մյուսներից առանձնացած արտադրական ձեռնարկութեան առկայութեան մասին:

Սակայն, վորպէսզի ձեռնարկութիւնը համարենք միասնական և մյուսներից առանձնացած, միայն վարչական առանձնացածութիւնը դեռ բավական չէ: Անհրաժեշտ է, զոր վարչական առանձնացածութիւնը բոլորի ձեռնարկութեան առանձին մասերի արտադրատեխնիկական միասնութիւնից: Արտադրատեխնիկական միասնութեան անվան տակ հասկացվում է արտադրութեան առանձին մասերի տեխնիկական այնպիսի կապը, զորը նրանց դարձնում է միասնական ամբողջութիւն: Այդ կապը զանազան ձևերը նշված են Կենսովիճվարի (ԱԿՄ) վերը հիշատակված շրջաբերականում:

Կենսովիճվարի 1925 թ. շրջաբերականով տրված արտադրական ձեռնարկութեան առանձնացածութեան հատկանիշների բնորոշումը համարյա թե ամբողջապէս կրկնված է արդիւնաբերութեան ստուգիչ թվեր և ընթացիկ ստատիստիկական հաշվետվութիւն կազմելու մասին հրահանգներում:

«Առանձին արտադրական ձեռնարկութիւն (գործարան, ֆաբրիկա) — ասված է այդ հրահանգներում — համարվում է միավորման (տրեստի) այն մասը, զորն ունի՝

1. Վարչական առանձնացածութիւն, զորը բնութագրվում է միասնական վարչական դեկլարութեամբ և ինքնուրույն ու ավարտված հաշվետվութեամբ:

2. Արտադրատեխնիկական միասնութիւն, զորը բնութագրվում է

և արտադրութեան ստադիայի հաջորդականութեամբ կամ նույնատեսակութեամբ, կամ հիմնական ու ոժանդակ արտադրութիւնների փոխադարձ կախվածութեամբ»:

Ինչպէս գործող հրահանգների այս ցուցումը, այնպէս էլ այս ցուցումի համար հիմք ծառայած Կենսովիճվարի (ԱԿՄ) շրջաբերականը չի կարելի արտադրական ձեռնարկութեան հասկացողութեան բնորոշման ճշտման բնագավառում չհամարել մի քայլ առաջ: Սակայն, դժբախտաբար, չի կարելի ասել, զոր հարցը լուծվում է միանգամայն պարզ կերպով, առանձնապէս, յերբ հաշվի յենք առնում հրահանգի հետևյալ ցուցումը. «Այն դեպքերում, յերբ գոյութիւն ունի վարչական միասնութիւն, իսկ բացակայում է արտադրատեխնիկական միասնութիւնը, արդիւնաբերութեան տարբեր ճյուղերի պատկանող ձեռնարկութիւնները համարվում են առանձին արտադրական ձեռնարկութիւններ *): (Ուրեմն)՝ բամբակեղեն գործվածքների ֆաբրիկային կից սղոցարան, աղյուսի, տորֆի մշակման և այլ ձեռնարկութիւններ»:

Զխոսելով մեր ցիտատում բերված ցուցումի խմբագրական բացահայտ անհաջողութեան մասին, վորտեղ «ձեռնարկութիւնները համարվում են առանձին ձեռնարկութիւններ», պետք է ասել, զոր այստեղ էլ անորոշութիւն կա. պետք է արդյոք վարչական միասնութեան շրջանակների մեջ ինքնուրույն ձեռնարկութիւններ համարել այդ միասնութեան բոլոր այն մասնիկները, զորոնք տեխնիկապէս տարբեր բնույթի պրոցեսով են զբաղված և զորոնք «պատկանում են արդիւնաբերութեան տարբեր ճյուղերին»: Այդպիսի հարց չի առաջանում այն դեպքերում, յերբ տեքստիլ ֆաբրիկային կից գոյութիւն ունի սղոցարան (զորպէս առանձնացած ձեռնարկութիւն), այլ նա ծագում է այն դեպքում, յերբ այդ նույն տեքստիլ ֆաբրիկային կից գոյութիւն ունի գործվածքները ծրարելու համար արկղեր պատրաստող արհեստանոց և այլն:

Անկասկած, անհրաժեշտ են վորոշ լրացուցիչ ցուցումներ, զորի լույսի տակ արտադրական ձեռնարկութեան հասկացողութիւնը դառնա ավելի քան պարզ:

Յեկնելով Կենսովիճվարի (ԱԿՄ) 1925 թ. վերահիշյալ շրջաբերականից (զոր հիմնականում միանգամայն ճիշտ է) և լրացնելով այն արդիւնաբերութեան կազմակերպման մասին գործող որոշողութիւնից մի քանի հատկանիշներով, կարելի յէ սահմանել առանձնացած արտադրական ձեռնարկութեան հետևյալ հատկանիշները.

Ինքնուրույն, այրիմն՝ մյուսներից առանձնացած արտադրական ձեռնարկութիւն պէտք է համարել վարչական առանձնացածութիւն ունեցող այնպիսի արտադրական միավոր, զորի վարչական առանձնացածութիւնը պայմանավորված է նրա բոլոր բաղկացուցիչ մասնիկների արտադրատեխնիկական միասնութեամբ:

Արտադրական ձեռնարկութեան վարչական առանձնացածութեան հատկանիշները հետևյալներն են՝

*) Ընդգծումն մերն է — Դ. Ս.

1. Կառավարման միասնութիւնը, վերջինս բնութագրւում է այնպիսի հասուկ գիրեկտորի գոյութեամբ, վորն իրավունք ունի ձևաւորութեան կողմից ուղղակի և տեղական (լոկալ) պայմանադրեր կնքելու այլ ձեռնարկութեանները և գործակալները հետ,

2. Պետքանկում սեփական կոնտոկորենտ հաշվի առկայութեան,

3. Արտադրական հաշվապահութեան ավարտված սխտեմի առկայութեան, ոգուտները ու ֆնանսերի գրաւորման հետ մեկտեղ:

Արտադրական ձեռնարկութեան առանձին մասերի արտադրատեխնիկական միասնութիւնը կայանում է նրանց այնպիսի փոխադարձ կապի մեջ, վորոնց առկայութեան դեպքում, բոլորը միասին կազմում են մի միասնական ամբողջութիւն: Այս արտադրական միասնութիւնը կարող է արտահայտուիլ կամ առանձին տեխնիկական պրոցեսների հաջորդական կապի ձևով, կամ այդ պրոցեսների միատեսակութեան և կամ թի՛ հիմնական ու ոժանդակ արտադրութեանների փոխկապվածութեան ձևով:

Առանձնացած արտադրական ձեռնարկութեան պետք է համարել միայն այնպիսի արտադրական միավորը կամ արտադրական միավորների այնպիսի գուգակցութիւնը, վորոնք ունեն թե՛ վարչական առանձնացածութիւն և թե՛ արտադրական միասնութիւն:

Վորպես բացառութիւն, տեստեսական միասնութեան առանձին մասերը, յերբ նրանք ունեն յերկու հատկանիշներն ել, ինքնուրույն արտադրական ձեռնարկութիւն կարելի յե համարել պլանային ու հաշվետվական որգանները, նրանց մասին ուղղակի ցուցումների առկայութեան դեպքում (մետաղաձուլական գործարաններին կից հրակայուն արտադրութիւն, կոկսի արտադրութիւն և այլն):

Մի փոքր կանգ առնենք այս բացառութեան վրա: Նրա խմտանայն է, վոր պլանային և հաշվետվական աշխատանքը ղեկավարող բարձրագույն որգանների ուղղակի ցուցումների առկայութեան դեպքում, միասնական արտադրական ձեռնարկութեան առանձին մասերը պետք է համարել վորպես առանձին ձեռնարկութեաններ: Վորպես այս բացառութեան կիրաւման կոնկրետ որինակ, մենք նշեցինք այնպիսի դեպք, յերբ մետաղաձուլական գործարանին կից ցեխի իրավունքներով ռժտված հրակայուն արտադրութիւնը պայմանականորեն համարվում է ինքնուրույն ձեռնարկութիւն: Այստեղ մենք տեսնում ենք վերևում քննարկված ընդհանուր կանոնից ակնհայտին շեղում: Դրա նպատակահարմարութեանը կարող է հիմնավորուիլ ամենից առաջ այն անհրաժեշտութեամբ, վոր ներկա ժամանակում հատուկ կարեւորութիւն ունեցող վորոշ արտադրութեաններ յենթարկվում են հատուկ դիտումի: Այս նկատառումներով այդ արտադրութեաններին աշխատանքի պլանային ղեկավարութիւնը հանձնարարվում է հատուկ որգանների (որինակ, սե մետաղաձուլման գլխավոր վարչութեան կազմում գոյութեան ունեցող հրակայուն արդյունաբերութեան սեկտորը): Սակայն այդ հատուկ դիտումի անհրաժեշտութեանը պահանջում է ձեռնարկութեան համապատաստան մասերի հատուկ հաշվետվութիւն: Յերկրորդ նկատա-

ռումը առաջ է բերում արտադրական ձեռնարկութեան վորոշ մասերը պայմանականորեն ինքնուրույն ձեռնարկութեաններ համարելու անհրաժեշտութեանը, այն է, վոր ձեռնարկութեանների ներկա կառուցվածքի ժամանակ միևնույն արտադրութեանը կարող է գոյութեան ունենալ և՛ վորպես հատուկ ձեռնարկութիւն, և՛ վորպես բարդ կոմբինատի բաղկացուցիչ մաս: Որինակ, այդ նույն հրակայուն առարկաների արտադրութիւնը կարող է կենտրոնացուիլ և՛ ինքնուրույն ձեռնարկութեան մեջ, բայց կարող է գտնուիլ նաև մետաղաձուլական ձեռնարկութեաններին կազմում: Ներքևում դեռ կխոսուի այն մասին, վոր առանձին արտադրական միավորները միատեսակ խմբակների մեջ միացնելու դեպքում (վորոնք կոչված են արդյունաբերութեան ճյուղեր), արդյունաբերութեան համապատասխան ճյուղին են դասվում վո՛չ թե ձեռնարկութեան առանձին մասերը, այլ վորջ ձեռնարկութեաններ իրենց բոլոր ցեխերով հանդերձ: Այսպիսի պայմաններում, յեթե մենք բերված որինակում հրակայուն արտադրութիւնը համարեցինք վորպես մետաղաձուլական գործարանի մի մասը և նրան գործարանի մյուս մասերի հետ դասեցինք սե մետաղաձուլութեան շարքը, մենք այդպիսով մեր ամփոփումներում արհեստականորեն կպակեցնենք հրակայուն արդյունաբերութեան արդյունքների հանրագումարը: Հետևաբար, մետաղաձուլական գործարանների հրակայուն արտադրութիւնը դիտելով վորպես ինքնուրույն ձեռնարկութիւն, մենք դրանով իսկ սպառիչ կերպով կապահովենք հրակայուն արդյունաբերութեան արդյունքների լրիւլութիւնը: Վերջում մեր ասածներին պետք է ավելացնել այն, վոր առանձին արտադրութեանների առանձնահատկութիւնը պահանջում է նրանցից յուրաքանչյուրի համար ստեղծել հաշվետվութեան այնպիսի հատուկ ձևեր, վորոնք ընդգրկելին նրանց սպեցիֆիկ առանձնահատկութեանները:

Հիմնավորելով առանձնայած ձեռնարկութեան հատկանիշների մասին առանձին դեպքերում ընդհանուր կանոններից շեղուիլու անհրաժեշտութեանը, պետք է այնուամենայնիվ նկատել ունենալ վոր այդ շեղումները միայն բացառութիւն են ընդհանուր կանոնից, մի բացառութիւն, վոր հատուկ վերահսկողութեան տակ պետք է առնուի: Դրանով իսկ անհրաժեշտութեան է առաջանում ճշգրիտ ռեգլամենտացիայի յենթարկելու այն դեպքերը, վորտեղ այդ բացառութիւնը կարող է տեղի ունենալ:

ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅԱՆ ՏԻՊԵՐՆ ԸՍՏ ԲԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ

Մի ձեռնարկութեան մյուսից սահմանադիւլու խնդիրը գործնականում բարդանում է նրանով, վոր արդյունաբերութեան ուսումնասիրելիս, մենք հաճախ հանդիպում ենք իր կազմով շատ բարդ ձեռնարկութեանների և յերբեմն չափից դուրս դժվար է լինում լուծել այն հարցը, թե արդյոք մենք գործ ունենք միասնական ձեռնարկութեան մի մասի հետ, թե՛ ինքնուրույն ձեռնարկութեան հետ կապված 39

այլ ձեռնարկութեան հետ Սյս կապակցութեամբ անհրաժեշտ և ծանոթանալ ձեռնարկութեանների հիմնական տիպերի հետ, վերոնք տարբերվում են իրենց բարդութեան աստիճանով:

Արտադրական ձեռնարկութեանների զանազան տիպերի բնորոշմանը մոտենալով, մենք դեմ ենք առնում արտադրութեան հասկացությունը, վորի վրա և անհրաժեշտ և կանգ առնել:

Արտադրութեան անվան տակ հասկացվում է բարդ, արտադրական պրոցեսի տեխնիկական տեսակետից ավարտված վորեւ մասը կամ ստալիան*): Արտադրութեան համար արտաքին հատկանիշ կարող է ծառայել այն, վոր արտադրութեան արդյունքը հանդիսանում է այնպիսի պրոդուկտ, վորը կարող է արտադրութեան շրջանակներից դուրս գալ, կամ վորպես վերջնական պատրաստի պրոդուկտ կամ վորպես հետագա մշակման համար անհրաժեշտ նյութ: Սյսպես, որինակ, բամբակյա գործվածքների պատրաստման բարդ պրոցեսը կարող է բաժանվել յերեք հաջորդական ստադիաների, վորոնցից յուրաքանչյուրն ունի տեխնիկորեն ավարտված բնույթ. դրանք են՝ մանվածքի արտադրություն, կոշտ (անմշակ) գործվածքների արտադրություն և մշակված (ձերմակացրած, ներկված) գործվածքի արտադրություն:

Սկնհայտ է, վոր այն դեպքերում, յերբ այս կամ այն արտադրանքի ստացումը առանձին, տեխնիկորեն ավարտված ստադիաների չի բաժանվում, ապա վորջ այդ պրոցեսում կդիտվի վորպես մի արտադրություն: Այդպիսին է, որինակ, վոտամանի արտադրությունը, սպիտակեղենի կամ հաղուտի կարումը, քարածխի արդյունահանումը և այլն:

Արդյունաբերությունն ուսումնասիրելիս, առանձին ձեռնարկություններում մենք հանդիպում ենք և՛ այնպիսի ձեռնարկությունների, վորոնց շրջանակներում գոյություն ունի մի արտադրություն, և՛ այնպիսիների, վորոնց շրջանակներում միավորվում են մի քանի արտադրություններ: Առաջին տիպի ձեռնարկությունները կարող են կոչվել պարզ ձեռնարկություններ, իսկ յերկրորդ տիպի ձեռնարկությունները—բարդ կամ կոմբինացված ձեռնարկություններ:

Պարզ ձեռնարկությունների համար վորպես որինակ կարող են ծառայել սղոցաբանը, վոտամանի, կարի, մանվածքային և գործվածքային ֆաբրիկաները: Անկախ այն բանից, թե ձեռնարկութեան մեջ գոյություն ունի այդպիսի վոչ-բարդ արտադրական պրոցես (վորը չի բաժանվում առանձին արտադրությունների), թե նրանում գոյություն բաժանվում առանձին արտադրությունների, վորը բարդ արտադրական պրոցեսի մի կուսենա մի արտադրություն, վորը բարդ արտադրական պրոցեսի մի ստադիա չի, միևնույն է, յերկու դեպքումն էլ մենք կուսենանք պարզ ձեռնարկություն:

Ի հակադրություն պարզ արտադրական ձեռնարկութեան, բարդ կամ կոմբինացված արտադրական ձեռնարկություն է կոչվում այն

ձեռնարկությունը, վորն իր կազմի մեջ միավորում է մի քանի արտադրություններ: Ընդ վորում պետք է նկատի ունենալ, վոր մի ձեռնարկություն մեջ կարող են միավորվել կամ մի բարդ արտադրական պրոցեսի մի քանի հաջորդական ստադիաներ, կամ թե մի քանի արտադրություններ, վորոնք չեն հանդիսանում մի բարդ արտադրական պրոցեսի ստադիաներ: Նայած թե տվյալ դեպքում մենք կոմբինացման ինչպիսի տիպի հետ գործ ունենք, ըստ այնմ էլ մենք կուսենանք կամ ուղղահայաց կամ հորիզոնական տիպի կոմբինատ:

Ուղղահայաց կերպով կոմբինացված ձեռնարկութեան անվան տակ հասկացվում է մեկ արտադրական ձեռնարկություն շրջանակներում հաջորդական կերպով կապակցված մի քանի արտադրությունների միավորում, այլ կերպ ասած՝ այնպիսի արտադրություններ, վորոնցից մեկը նյութեր է պատրաստում մյուսի համար:

Այսպես որինակ, յիթե մենք վերեում բերված որինակում բամբակեղեն գործվածքների արտադրութեան պրոցեսը բաժանեցինք յերեք արտադրությունների, ապա մեկ արտադրական ձեռնարկությունում բոլոր այդ արտադրությունների (մանածա-գործվածքա-մշակողական գործարան) կամ նրանցից յերկուսի (մանածա-գործվածքային, գործվածքա-մշակողական) միավորումը կծառայի վորպես որինակ ուղղահայաց տիպի կոմբինատի: Նույն տիպի կոմբինատի մի այլ որինակ կարող է ծառայել մետաղաձուլական գործարանը, դոմենյան, մարտենյան և պրոկատային արտադրութեամբ, կաշվեկոշակարարային գործարանը և այլն:

Հորիզոնական ձևով կոմբինացված արտադրական ձեռնարկություն է հանդիսանում այն ձեռնարկությունը, վորի շրջանակներում միավորվում են մի քանի այնպիսի արտադրություններ, վորոնք չեն հանդիսանում մի արտադրական պրոցեսի (բարդ) ստադիաներ կամ այլ կերպ ասած՝ հաջորդական կապով միմյանց հետ կապակցված չեն: Վորպես որինակ այդպիսի կոմբինացիոնի, կարող է ծառայել մեկ ձեռնարկություն մեջ այնպիսի արտադրությունների միավորում, ինչպիսիք են որինակ քիմիական գործարանը և տակառագործարանը, վոտամանի ֆաբրիկան և կաղապարագործական արհեստանոցը, լուցկու ֆաբրիկան և թիերի արտադրությունը և այլն: Սովորաբար հորիզոնական տիպի կոմբինացման տարբերիչ հատկանիշն ընդունված է այն, վոր զանազան արտադրությունների միավորումն այստեղ տեղի ունի տնտեսական նպատակահարմարության նկատառումներով: Սակայն խոսել այդ մասին վորպես այդ տիպի կոմբինացման տարբերիչ հատկանիշի, կնշանակեր բացասել ուղղահայաց կոմբինացման տնտեսական նպատակահարմարությունը:

Մանրթանալով արտադրական ձեռնարկությունների զանազան տեսակներին հետ (ըստ նրանց բարդութեան աստիճանի), անհրաժեշտ է ամենից առաջ նշել, վոր ձեռնարկությունների, ըստ այդ տիպերի բաժանումը լոկ արտարակա սխեմայի նշանակություն ունի, այնպիսի սխեմայի, վորի մեջ իրականությունը միշտ չի տեղավորվում: Ամենից 41

*) «Արտադրություն» տերմինը տնտեսագիտական գրականության մեջ գործ էածվում այլ, ավելի լայն իմաստով—տնտեսական գործունեություն իմաստով, վորի նպատակն է այս կամ այն նյութական բարեքների ստեղծումը կամ ստացումը:

առաջ պետք է ասել, վոր մենք համարյա յերբեք չենք հանդիպի մա-
քուր ձևով պարզ արտադրութեան:

Այնուհետև անհրաժեշտ է նշել, վոր կոմերիսավորման նշված տի-
պերը սակավ են պատահում մաքուր ձևով, սովորաբար մենք հանդի-
պում ենք իսպառ կոմերիսավորման և ուղղահայաց, և հորիզոնական:

Այստեղ կանգ չենք առնում արտադրական ձեռնարկութեանները
այս կամ այն կառուցվածքային տիպերի գոյութեանը պայմանավորող
նախադրյալների վրա, ինչպես և այս կամ այն տիպի գոյութեան ու
զարգացման տնտեսական նպատակահարմարութեան բարդ հարցի վրա,
կանգ առնենք նաև արդյունաբերութեան կազմակերպութեանը հատուկ
և մեր թեմայի հետ ուղղակիորեն առնչութեան ունեցող մի մոմենտի
վրա ևս:

Կոմերիսավորված ձեռնարկութեանների գոյութեան հետ մեկտեղ,
վորոնց առանձին մասերը միմյանց հետ կապված են ընդհանուր ար-
տադրական պրոցեսի առանձին ստադիաները կատարելով, գոյութեան
ունի նաև առանձին արտադրական ձեռնարկութեանների նմանորինակ
կապ, վորը հայտնի յե կոոպերացում անունով:

Կոոպերացման հոդի վրա առաջացած մի քանի արտադրական
ձեռնարկութեանների այսպիսի կապի օրինակ կարող է ծառայել թե-
կուզ Ստալինգրադի և «Կրասնի Ոկտյաբր» մետաղաձուլական գործա-
րանների փոխհարաբերութեանը (վորտեղ յերկրորդն առաջինին մա-
տակարարում է մետաղ), կամ թե «Շարիկոպողչիպնիկ» և «Ելեկտրո-
ստալ» գործարանների կապը (վերջինս «Շարիկոպողչիպնիկին» է մա-
տակարարում վորակավոր պողպատ) և այլն: Պլանային սոցիալիստա-
կան տնտեսութեան պայմաններում առանձին ձեռնարկութեանների
միջև յեղած կապը ի հակադրութեան մասնատիրական կապիտալիս-
տական տնտեսութեան կրում է վնչ թե պատահական, ժամանակավոր
բնույթ, այլ վորոշ սխառեմի բնույթ: Վորոշ դեպքերում նա ստանում
և կազմակերպչական ձևավորում, վերջինս իրականացվում է կոոպի-
րացված գործարանները ինքնուրույն միավորման իրավունքներով
գործող կոմերիսատի մեջ միավորելու ձևով, իսկ այլ դեպքերում՝ այդ
կապը իրականացվում է արտադրական պլանները համաձայնեցնելու
միջոցով:

Առանձնացված և ինքնուրույն ձեռնարկութեանների մասին (թե
վորը պիտի համարել այդպիսին) վերևում տրված ցուցումները հատուկ
նշանակութեան են ստանում իրոք այն դեպքերում, յերբ մենք հան-
դիպում ենք մի քանի արտադրական միավորների կապակցութեաննե-
րի առկայութեան: Արդյոք ավյալ դեպքում մենք ունենք մի քանի
արտադրական ձեռնարկութեաններ, թե մի ձեռնարկութեան մեջ միա-
ցած մի քանի արտադրութեաններ, այս հարցն է, վոր յուրաքանչյուր
կոնկրետ դեպքում կարելի է լինի լուծել, վերևում հիշված կոնկրետ չա-
փանիշներով մոտենալով միայն: Յեթե միմյանց հետ փոխադարձաբար
կապված ձեռնարկութեաններից վորեւ մեկը ոժտված է ինքնուրույն
42 արտադրական ձեռնարկութեան հիշված բոլոր հատկանիշներով, ապա

մենք նրան կհամարենք ձեռնարկութեան: Հակառակ դեպքում մենք
կունենանք միասնական բարդ ձեռնարկութեան մի մասը միայն:

ՅՆԵՐ ՎՈՐՊԵՍ ԴԻՏՄԱՆ ՄԻԱՎՈՐ

Վերը մենք արդեն նշեցինք, վոր վորոշ դեպքերում, վորպես
ստատիստիքական դիտման միավոր, կարող է լինել նաև ձեռնարկու-
թեան մի մասը—ցեխը: Վերջինս դիտման միավոր է դառնում այն
դեպքերում, յերբ մեզ հետաքրքրում է այնպիսի յերևույթ, վորը ա-
վարտված ձևավորում է ստանում ցեխի շրջանակներում:

Յեխի անվան ցալ հասկացվում է արտադրական ձեռնարկութեան
մի մասը, վորը ձևավորմանը առանձնացել է ձեռնարկութեան մյուս մա-
սերից, սակայն այդ առանձնացումը չի դառնում այնպիսի ինքնու-
րույն, վորպիսին բնորոշ է ինքնուրույն ձեռնարկութեանը:

Յեխի բնորոշ հատկանիշներն են.

1. Ձեռնարկութեան մյուս մասերից ձևականորեն առանձնացված
լինելը:

2. Նրան ինքնուրույն ձեռնարկութեան դարձնող առանձնահատ-
կութեան բացակայութեանը:

Համաձայն արդյունաբերութեան մասին գործող օրենսդրութեան,
ցեխի ձևական առանձնացվածութեանը վորոշվում է հետևյալ մոմենտով.

1. Յեխի անմիջական կառավարումը հանձնվում է ցեխի վարիչին
(կամ ցեխի պետին),

2. Յեխի արտադրական գործունեյութեանը սահմանվում է գոր-
ծարանի վարչութեանից տրված նարչադ-պատվերով,

3. Յեխն ունի իր հաշվետվութեանը և կարող է ունենալ իր հաշ-
վեկշիռը, սակայն առանց այն հետևանքային հաշիվների, վորոնք (ինչ-
պես վերը տեսանք) արտադրական ձեռնարկութեան հաշվետվութեան
սխառեմին տալիս են ավարտված բնույթ:

Բացի հաշվետվութեան սխառեմում հետևանքային հաշիվների բա-
ցակայութեանից, ցեխի և ձեռնարկութեան մեջ յեղած ելական տար-
բերութեանը հանդիսանում է նաև այն, վոր ցեխը իրավունք չունի
դրսի աշխարհի հետ ինքնուրույնաբար հաշվարկային-պայմանագրա-
կան հարաբերութեանների մեջ մտնելու, բացի այդ՝ ցեխը, վորպես
ընդհանուր կանոն, Պետրանկում չունի սեփական հաշվարկային հաշիվ:

Յեխն ուղղիական պրոցեսի տեսակետից, վորպես ինքնուրույն ցեխ,
առանձնանում է արտադրական պրոցեսի վորեւ ինքնուրույն մասը:
Վորոշ դեպքերում այդպիսի մաս է հանդիսանում արտադրական պրո-
ցեսի այն տեխնիկական անդամի մասը, վորը մենք վերևում անվանե-
ցինք «արտադրութեան». բայց լինում են դեպքեր, յերբ վորպես ցեխ
առանձնանում է նաև արտադրութեան մի մասը: Պետք է նշել, վոր
ձեռնարկութեան բաժանումը ցեխի բոլորովին էլ ստանդարտ չէ: Դեպ-
քեր են լինում, յերբ միևնույն արտադրական պրոցեսը տարբեր ձեռ-
նարկութեանների կազմակերպչական կառուցվածքում առանձնանում է
տարբեր ցեխերում, վորոնք ունեն մասնատելիութեան տարբեր աստի- 43

ձանու Այստեղից պարզ է, վոր սխալ կլինե՞ր նույնացնել «ցեխ» և «արտադրություն» հասկացողությունները:

Սոսկելով ձեռնարկությունները ցեխերի բաժանելու մասին, պետք է նշել, վոր ձեռնարկության առանձնացած մասի ցեխ անվանելը նույնպես ստանդարտ չէ. այն, ինչ վոր մի ձեռնարկությունում կոչվում է ցեխ, մյուսներում կրում է ուրիշ անուն, այն է՝ բաժին, բաժանմունք, վորոշ ձեռնարկություններում այս մասերին անվանում են արհեստանոցներ (գարնազորժական արհեստանոց, ձուլարան արհեստանոց և այլն), իսկ վորոշ դեպքերում ձեռնարկության առանձին մասերն ըստ էության լինելով միասնական արտադրական ձեռնարկության մասերը, նույնիսկ կրում են գործարան անունը (այսպիսիք են, որինակ, Ջերտրեհենսկի քիմիական կոմբինատի գործարանները):

ՑԵՒՆԵՐԻ ԲԱԶՄԱՏԵՍԱԿՈՒԹՅՈՒՆ ԸՍՏ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՆՐԱՆՑ ՈՒՆԵՑԱՄ ԴԵՐԻ

Արտադրական ձեռնարկության առանձին մասերը, վորոնք առանձնացել են վորպես ցեխեր, կարող են ձեռնարկության կողմից կատարվող ընդհանուր արտադրական պրոցեսում տարբեր դեր կատարել: Այստեղից էլ կյանքի յեն կոչվել ցեխերի կլասիֆիկացիաները, այսինքն նրանց միավորումը միատարր խմբերում:

Ստատիստիկական պրակտիկայում ընդունված է արտադրական ձեռնարկությունների բաժանալիսի ցեխերը միացնել յերկու հիմնական խմբերի մեջ. դրանք են արտադրական և ոժանդակ ցեխերը. ընդ վորում այդ յերկուսից առաջինն իր հերթին բաժանվում է յերեք խմբերում: Նույնպես յենթախմբերի, այն է՝ հիմնական արտադրական, ոժանդակ և կողմնակի):

Ստատիստիկական հրահանգներում հիմնական արտադրական ցեխ ասելով հասկացվում են արտադրական ձեռնարկության այն ցեխերը (բաժանմունքները, բաժինները և այլն), վորոնք զբաղված են տվյալ ձեռնարկության կողմից արտադրվելիք պրոդուկտների պատրաստմամբ, այլ և հասկացվում են այն ցեխերը, վորոնք այդ պրոդուկտների համար կիսափարրիկատներ են պատրաստում:

Ոժանդակ կամ նպաստող ցեխեր համարվում են նրանք, վորոնք զբաղված են վճիթ անմիջական պրոդուկտի արտադրությամբ, այլ այդ պրոդուկտի համար տարալի պատրաստմամբ: Այսպիսի ցեխն են, որինակ, ցեմենտի ու քիմիական գործարաններում տակառագործական ցեխերը, կամ թե լուցկու գործարանի արկղներ պատրաստող ցեխը և այլն:

Ստատիստիկական հրահանգների համաձայն, կողմնակի ցեխերի շարքին պետք է դասել հիմնական արտադրության մնացորդներն ու տիլացման յենթարկող ցեխերին (ուտիլցեխեր):

Ինչպես վերը նշեցինք, ցեխերի վերոհիշյալ յերեք կատեգորիաներն էլ պատկանում են արտադրական ցեխերի խմբին: Սրանց բոլորի միջև ընդհանուրն այն է, վոր այստեղ բոլոր կարգի ցեխերն էլ կամ

անմիջականորեն պատրաստում են արտադրության սահմաններից դուրս բերվող պրոդուկտ (հիմնական և կողմնակի), կամ թե (ոժանդակ) արտադրում են արտադրության սահմաններից դուրս տարվող պրոդուկտի տարան:

Ի հակադրություն այս արտադրական ցեխերի, ոժանդակ ցեխերի խմբերի շարքն են դասվում արտադրական ձեռնարկության այն ձևականորեն առանձնացած մասերը (ցեխերը, բաժինները և այլն), վորոնց հիմնական դերն է իրենց աշխատանքի արդյունքներով սպասարկել արտադրական ցեխերին կամ վորջ ձեռնարկությանը: Դրանք են՝ շոգեռժկայանը, գործարանային ելեկտրոկայանը (յեթե միայն վերջինս ինքնուրույն արտադրական ձեռնարկություն չէ), գործարանային սարքավորում վերանորոգող արհեստանոցները, տրանսպորտային և տնտեսական բաժինները, իր ձեռնարկությանն սպասարկող ինտերումենտալ ցեխը և այլն: Այն դեպքերում, յերբ միևնույն ցեխը յերկակի դեր է կատարում, այսինքն՝ և՛ սպասարկում է իր ձեռնարկությանը, և՛ դրսի համար արտադրանք է պատրաստում, նայած վորն է նրանում գերակշռում, ըստ այնմ էլ նա կարող է դասվել կամ արտադրական ցեխերի խմբին կամ ոժանդակ ցեխերի խմբին: Այսպես, որինակ, յեթե գործարանի համար գործիքներ պատրաստող ցեխի արտադրանքի հիմնական մասսան գործարանի շրջանակներից դուրս է գնում, ապա նա դասվում է արտադրական ցեխերի շարքը, իսկ յեթե ամբողջապես (կամ գլխավորապես) սպասարկում է իր գործարանին, ապա կդասվի ոժանդակ ցեխերի խմբում:

ԳՈՐԾՈՂ, ՉԳՈՐԾՈՂ, ՑԵՎ, ԿՈՆՍԵՐՎԱՑՎԱՄ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ձեռնարկության ցեխերի բաժանումը յերկու հիմնական խմբերի (արտադրական և ոժանդակ), վորոշ ստատիստիկական ցուցանիշներ հաշվելիս, ունի գործնական խոշոր նշանակութուն: Մենք քիչ հետո կտեսնենք, վոր այդ բաժանումը վորոշ նշանակութուն ունի բանվորական ուժի խմբավորման ժամանակ: Բացի դրանից, ցեխերի ընդհանուր մասնալից արտադրական ցեխերի, խմբերի առանձնացումը վորոշ նշանակութուն ունի, յերբ մենք ինտրոշում ենք գործող ձեռնարկության հասկացողությունը:

Մեր ստատիստիկական պրակտիկայում գործող արտադրական ձեռնարկություն է համարվում այն ձեռնարկությունը, վորտեղ տվյալ հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում տեղի յե ունեցել արտադրական աշխատանք՝ թեկուզ մի արտադրական ցեխում, անկախ նրանից, թե վորքան տևական է յեղել այդ աշխատանքը:

Ինչպես յերևում է վերոհիշյալ բնորոշումից, ձեռնարկությունը գործող է համարվում՝

1. Յեթե նրա շրջանակներում աշխատանք է կատարվել արտադրական ցեխում (թեկուզ մեկում),

2. Յեթե այդ աշխատանքը կատարված է յեղել արտադրության համար:

Այս իսկ պատճառով մենք ձեռնարկութեանը գործող չենք կարող համարել այն ժամանակաշրջանում, յերբ աշխատել են նրա ոժանդակ ցեխերը միայն (որինակ ելեկտրոկայանը, վերանորոգման արհեստանոցը և այլն): Նմանապես մենք չենք կարող ձեռնարկութեանը գործող համարել այն ժամանակաշրջանում, յերբ նրա արտադրական ցեխերում կատարվել են վոչ թե արտադրական աշխատանք, այլ սեղի յե ունեցել, որինակ, վերանորոգում, սաքրավորման մաքրում և այլն:

Վերը հիշատակված յերկու պայմանների առկայութեան դեպքում ձեռնարկութեանը գործող և համարվում, անկախ նրանից, թե նրա աշխատանքի ժամանակաշրջանը վորքան տևական և յեղի: Այսպես որինակ, յեթե վերը նշված յերկու պայմանը տեղի յեն ունեցել միայն մի որ, ապա տվյալ հաշվետու ամսում ձեռնարկութեանը կղատվի գործողների շարքը: Ավելին, յերբ մենք հաշվում ենք տվյալ տարում գործող ձեռնարկութեանների թիվը, այդ դեպքում վերոհիշյալ ձեռնարկութեանը պետք է դասենք գործողների շարքը: Այստեղից պարզ և, վոր խոսելով գործող ձեռնարկութեանների մասին, ստատիստիկական հաշվետվութեանը նրանց շարքն է դասում բոլոր այն ձեռնարկութեանները, վորոնք տվյալ ժամանակաշրջանում թեկուզ ամենատանջան տեղութեամբ գտնվել են աշխատելու վիճակում:

Միանգամայն պարզ և, վոր գործող ձեռնարկութեան վերը բնորոշած ըմբռնումը պարտավորեցնում և ստատիստիկական հաշվետվութեանը իր ծրագրի մեջ մտցնելու ձեռնարկութեան աշխատելու որերի հարցը: Այս հարցին պատասխանելիս պիտի նկատի ունենալ, վոր աշխատանքի որ և համարվում այն յուրաքանչյուր որը, վորը բավարարում է վերը հիշատակված պահանջներին:

Այն ձեռնարկութեանը, վորը չի բավարարում գործող ձեռնարկութեան համար վերը հիշված պայմաններին, (այսինքն այնպիսին, վորտեղ բոլորովին աշխատանք չի կատարվել, կամ կատարվել է ոժանդակ ցեխերում, կամ կատարվել է արտադրական ցեխերում վոչ արտադրական բնույթի աշխատանք), համարվում է չաշխատող ձեռնարկութեան:

Չաշխատող ձեռնարկութեաններն իրենց հերթին բաժանվում են յերկու խմբի՝ չգործող և կոնսերվացված ձեռնարկութեանների:

Չգործող ձեռնարկութեան տեղով պետք է հասկանալ այնպիսի ձեռնարկութեան, վորը չկայած Տվյալ մոմենտին չի աշխատում, բայց տեղում պլանով նախատեսված է աշխատելու կամ արդեն աշխատել է տարվա նախորդ ամիսներին: Չգործող ձեռնարկութեաններն ամենից լավ կարելի յե ցույց տալ սեզոնային արտադրութեանների որինակով: Յենթադրենք, թե միավորման մեջ կա աղյուսի գործարան, վորը տվյալ ամսում չի աշխատել: Յեթե այդ աղյուսի գործարանը նախատեսված է աշխատելու տարվա հետագա ամիսներում, կամ յեթե նա աշխատել է տարվա նախորդ ամիսներում, ապա նա դասվում է չգործողների խմբում:

Ի հակադրութեան չգործող ձեռնարկութեանների, ստատիստիկա-

կան պրակտիկան կոնսերվացված ձեռնարկութեաններ և համարում հաշվատող այնպիսի ձեռնարկութեանները, վորոնք և՛ չեն աշխատել տրվյալ տարվա անցած ամիսներում, և՛ նախատեսված չեն տվյալ տարում աշխատելու:

Գործող, չգործող և կոնսերվացված ձեռնարկութեանների մասին վերը մեր ասածներն ամփոփելով կարելի յե ասել, վոր առաջին յերկու խմբերը ներկայացնում են այնպիսի ձեռնարկութեանների հանրագումարներ, վորոնք կարծես մորիլիզացման են յենթարկվել տարեկան արտադրական պլանը կատարելու համար. ընդ վորում չգործող ձեռնարկութեանները միայն ժամանակավորապես չեն մասնակցում արտադրական աշխատանքներին:

Չաշխատող ձեռնարկութեանները չգործող և կոնսերվացված խմբերի բաժանելու պրակտիկ նշանակութեանը (ստատիստիկական աշխատանքների կազմակերպման տեսակետից) հանգում է նրան, վոր չգործող ձեռնարկութեանները պարտավորութեան են ունենում հաշվետվութեան ներկայացնելու, իսկ կոնսերվացվածներն այդ պարտավորութեանը չունեն:

Հ Ե Տ Ե Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

Վերը մենք շարադրեցինք մեր արդյունաբերական ստատիստիկայի մեջ կիրառվող դիտման միավորի լուծման յնդանակը: Ինչպես արդեն տեսանք, մեր արդյունաբերական ստատիստիկայի մեջ դիտման հիմնական միավորը հանգիստանում է արտադրական ձեռնարկութեանը վորպես տնտեսական այնպիսի միավոր, վորն ինքնուրույն կառավարմամբ և հաշվետվութեամբ առանձնացված է իր նման մյուս միավորներից և վորը բնորոշ է իր առանձին մասերի տեխնիկական կապակցութեամբ: Դիտման միավորի հարցի լուծման այսպիսի յեղանակն ամբողջովին համապատասխանում է արդյունաբերութեան պլանավորման սխեմային և նրա աշխատանքի պլանային կարգավորման մեր սխեմային:

Մեր արդյունաբերութեան և մասնավորապես ծանր արդյունաբերութեան կառավարման կազմակերպութեանը, խորհրդային ժամանակաշրջանում հաճախ է փոխվել: Սկսած վերականգնման ժամանակաշրջանի սկզբից արտադրական ձեռնարկութեանների աշխատանքի անմիջական ղեկավարութեան իրականացնող որգանների դերը առաջ պատկանում էր տրեստներին: Հետագայում նրանց փոխարինեցին միավորումները (ըստ վորում տրեստներին թողնվեց միայն ձեռնարկութեանների տեխնիկական ղեկավարման ֆունկցիաները) և, վերջապես, ներկայումս տեղի ունի միավորումների վերացման պրոցես ու վերջինսերիս ֆունկցիաների հանձնումը ծանր արդյունաբերութեան ժողկոմատի գլավկիններին (գլխավոր վարչութեաններին):

Արդյունաբերութեան կառավարման սխեմանում կատարվող այս բոլոր փոփոխութեանների ժամանակ էլ պլանային ներգործութեան որյիկը նորից մնում է արտադրական ձեռնարկութեանը. նրան են 47

տրվում պլանային վորոշ առաջադրանքներ, նրա կառուցվածքային տիպը աշխույժ գիտելուսիսներին առարկա յե, նրա աշխատանքը դառնում է պլանավորող որդանների ուղադրության կենտրոնը:

Այլ կերպ է լուծվում դիտման միավորի հարցը արևմտա-յերուսա-կան (որինակ՝ Դերմանիայի) մի քանի պետութունների արդյունաբե-րական ստատիստիկայի պրակտիկայում: Դերմանական արդյունաբե-րական վիճակագրություններում վորպես դիտման հիմնական միավոր ծառայում է վոչ թե արտադրական ձեռնարկությունը, այլ առաջադ-րումը, արտադրական պրոցեսի տեխնիկորեն առանձնացված մասի ի-մաստով: Այդ լակ պատճառով այնտեղ բարդ ձեռնարկությունների սահ-մաններում յերևան են գալիս դիտման մի քանի միավորներ: Դիտման միավորի հարցի լուծման այդ յեղանակը թեղադրվում է նրանով, վոր գերմանական արդյունաբերական վիճակագրությունների հիմնական նպատակը՝ պրոֆեսիանների ուսումնասիրությունն է: Սակայն տվյալ անձնավորության պրոֆեսիան ճշտիվ բնորոշելու համար հատուկ հե-տաքրքրություն է ներկայացնում վոչ թե ձեռնարկությունն, այլ այն արտադրությունը, վորտեղ այդ անձնավորությունն աշխատում է: Դիտ-ման միավորի հարցի լուծման այսպիսի մոտեցումը, ինչպես ճիշտ նշել է գերմանացի վիճակագիր Մեյերվերդը, մեղ զրկում է ուսումնասիր-ված նյութից ձեռնարկությունների կառուցվածքային տիպերի հարցի պատասխանը ստանալու հնարավորությունից: Իսկ մեր պայմաններում այդ մոտեցումը բացարձակապես անընդունելի յե:

Սակայն մեր արդյունաբերական ստատիստիկան վորպես դիտ-ման հիմնական միավոր ընդունելով արտադրական ձեռնարկությունը, չի կարող սահմանափակվել այդ միավորով: Չխոսելով արդյունաբերու-թյան մեջ տեղի ունեցող այն յերևույթների և պրոցեսների մասին, վորոնց համար վորպես դիտման միավոր ծառայում են այդ բարդ յե-րևույթների ու պրոցեսների սպեցիֆիկ մասնատրումները (պրոդուկտ՝ աշխատանքային կարգապահությունն ուսումնասիրելիս, դժբախտ պա-տահանները՝ արդյունաբերական տրավմատիզմն ուսումնասիրելիս և այլն), վորպես դիտման միավոր կարող են ընդունվել նաև արտադրա-կան ձեռնարկությունների առանձին մասերը (ցեխ, բրդագդ) այն դեպքերում, յերբ ուսումնասիրում ենք վերջիններիս մեջ տեղի ունե-ցող և ձևավորվող պրոցեսները: Դիտման հնարավոր միավորների այս բազմապիստությունը լիովին համապատասխանում է արդյունաբերական ստատիստիկայի աշխատանքների ծրագրի այն բազմակողմանիությա-նը, վորը միանգամայն անհրաժեշտ է պլանային սոցիալիստական շի-նարարության պայմաններում:

ՍՆԹՈՒՍԱԿԱՆ ՅՈՒՅՈՒՄՆԵՐ II ԳԼԽԻ ՀԱՄԱՐ

Դիտման միավորի հարցը դասվում է ստատիստիկական աշխա-տանքի հիմնական հարցերի շարքը: Այդ հարցի ճիշտ լուծումից է կախ-ված վոչ միայն տեղեկությունների հավաքումն, այլ և ճշտությունն այն հետևությունների, վորոնք արվելու յեն հավաքված նյութի վերջ-նական մշակումից:

Դրանից էլ հետևում է, վոր ուսանողները նախքան արդյունաբե-րական ստատիստիկայի հիմնական մեթոդին ծանոթանալը, հիմնովին պիտի մշակեն դիտման միավորի հարցը:

Ամենից առաջ անհրաժեշտ է պարզ պատկերացնել, թե ինչ բան է դիտման միավորն քնդհանրապես: Այդ հարցին ավելի հեշտ կլինի պա-տասխանել յերևելով հանրազումարի՝ վորպես որյեկսնեի վորո՞ւ գումա-րի հասկացողությունից: Այստեղից էլ կրդիտի այն, վոր դիտման միա-վոր կարող է լինել այդ գումարը կազմող որյեկսներից յուրաքանչյուր մեկը: II զլխում բերված որինակները ցույց են տալիս, վոր միևնույն հանրազումարը կարելի յե դիտել վորպես տարբեր միավորների գու-մար: Դրանից էլ անհրաժեշտություն է ծագում, լուծել այն հարցը, թե այս կամ այն հետազոտությունը կազմակերպելիս վո՞ր որյեկտը պետք է ընտրել վորպես դիտման միավոր:

Հետագա նյութը մշակելիս տեխնիկումի ուսանողները, վորպես միևնույն պետք է ուղադրել կերպով մշակեն այն հարցը, թե ժամանա-կակից պլանային և հաշվետվական պրակտիկայում վո՞րն է համարվում ինքնուրույն արտադրական ձեռնարկություն, իրենց համար պարզ պատկերացնեն արտադրական ձեռնարկության տիպերը, հասկանան ու ճանաչեն ձեռնարկության տարբեր տեսակի ցեխերը, իրենց համար պարզեն գործող ձեռնարկության հասկացողությունը և, վերջապես, պարզեն, թե ինչպիսի դեպքերում վորպես դիտման միավոր ընդունվում է տրեստը (միավորումը):

Խնդիրների ուսանողները հարցը պիտի մշակեն ավելի մանրամաս-նորեն: Մասնավորապես նրանց համար անպայման պարտադիր է II զըլ-խի ընդհանուր դրույթային մասի հիմնական մշակումը: Դիտման միա-վորի հարցի պարզորոշ լուծման բացակայության դեպքում տնտեսա-պետի առաջ կանգնած դժվարությունները պարզ պատկերացնելու հա-մար, հանձնարարում ենք մշակել Վ. Ի. Լենինի «Մեր ֆարքիլ-գործա-րանային արդյունաբերական ստատիստիկայի հարցի առթիվ» հոդվու-ծը (Ֆերկերի ժողովածու, Յ-րդ հրատ., հատ. II):

Այնուհետև պետք է հիմնովին հասկանալ արդյունաբերական ստա-տիստիկայի վերաբերյալ հին հրահանգների սխալները, հրահանգներ, վորոնք փորձում եյին տալու առանձնացած արտադրական ձեռնար-կության հատկանիշները:

Անհրաժեշտ է նաև պարզել, թե ինչու գերմանական ստատիստիկ-ները վորպես դիտման միավոր ընդունում են արտադրությունը: Սա-կայն նախ քան այդ հարցին պատասխանելը, պետք է ճշտիվ պարզել, թե ինչ բան է արտադրությունը և թե ի՞նչ տարբերություն կա ար-տադրության և ցեխի միջև:

ՍՆԹՈՒԳԻԶ ՀԱՐՑԵՐ II ԳԼԽԻ ՀԱՄԱՐ

Ա. Տեխնիկումի ուսանողության համար

1. Ի՞նչ է դիտման միավորը, 2. Արդյունաբերական ստատիստիկայի մեջ դիտ-ման վո՞ր միավորն է հիմնականը հանդիսանում, 3. Ի՞նչ է արտադրական ձեռնարկու-

թյունը, 4. Արտադրական ձևնարկությունները ինչպիսի տիպեր կարելի չե տարբերել ըստ նրանց բարդության աստիճանի. ավելիք ձևնարկության յուրաքանչյուր տիպի բնութիւնը, 5. Արտադրական ձևնարկությունում ցեխերի ինչպիսի տեսակներ պետք է տարբերել, 6. Ինչպիսի ձևնարկությունն է համարվում զործող տվյալ ժամանակաշրջանում, 7. Ինչպիսի դեպքերում է վերսկսել դիտման միավորը ընդունվում արեսորը (միավորումը):

Բ. Լրացուցիչ հարցեր ինստիտուտի ուսանողության համար

1. Ստատիստիկական դիտումներ կազմակերպելիս ինչպիսի նշանակութուն ունի դիտման միավորի հարցը, 2. Դիտման միավորն ընդունելիս ինչպիսի հիմնական կանոնով պետք է ղեկավարվել, 3. Ինչպիսի դժվարություններ են ծագում տնտեսագետի առաջ, յերբ նա ուղտաղործում է այնպիսի ստատիստիկական նյութեր, վորոնք հավաքված են ընտրված դիտման միավորի հատկանիշների բնորոշման բացակայության պայմաններում, 4. Ինչու են կայանում խորհրդային արդյունաբերական ստատիստիկայի առաջին տարիների պրակտիկայում՝ առանձնացված ձևնարկությունները համար ընդունված հատկանիշների անհիմն լինելը, 5. Ինչ է արտադրությունը և ինչ տարբերություն կա արտադրության և ցեխի միջև, 6. Ինչպե՞զ գերմանական վիճակագրությունը դիտման միավոր է համարում արտադրությունը:

Վ Բ Ա Կ Ա Ն Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

1. Լ և Ն ի ն—«Մեր ֆաբրիկ-գործարանային արդյունաբերական վիճակագրության ամսթիվ», Յերկերի ժող. 3-րդ հրատ. II հատոր, 2. Լ և Ն ի ն—«Կապիտալիզմի զարգացումը Ռուսաստանում», Յերկերի ժող., հատ. III, 3. Ռ ո տ շ տ և յ ն—«Սոցիալիստական արդյունաբերության ստատիստիկայի հիմունքները», 4. Վ ա ռ զ ա ռ—«Անարկներ արդյունաբերական ստատիստիկայի հիմունքների մասին», մասն և:

Գ յ ու լ իս III

ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԼԱՍԻՖԻԿԱՑԻԱՆ ԸՍՏ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՃՅՈՒՂՆԵՐԻ

ԿԼԱՍԻՖԻԿԱՑԻԱՆ ՎՈՐՊԵՍ ԽԲԲԱՎՈՐՄԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԻՑ ՄԵԿԸ

Արդյունաբերության ստատիստիկական դիտումների արդյունքը (անկախ նրանից, թե այդ իրականացվում է միանվագ հետազոտության, թե ընթացիկ դիտումների կարգով) միշտ էլ կլինի վորոշ մասնայական նյութ այն յեզակի որյեկտները վերաբերյալ, վորոնք ընդունված են վորպես դիտման միավորներ: Հավաքված նյութի հետագա ստատիստիկական մշակման խնդիրն է՝ այդ նյութից ստանալ այնպիսի ավարտված ամփոփիչ պատկեր, վորը բնութագրում է յեզակի որյեկտների վորջ մասան, վորջ ուսումնասիրվելիք հանրագումարը:

Ինչպես հայտնի յե, ուսումնասիրվող հանրագումարի ամբողջական պատկերի ստացումն իրականացվում է ստատիստիկական աշխատանքի այլ ստադիայում, վորը կոչվում է ստատիստիկական նյութի ամփոփում:

Դիտումների միջոցով հավաքված նյութի ստատիստիկական ամփոփումը հասարակ մեխանիկական հաշվումը չէ: Ստատիստիկական ամփոփումն այս կամ այն չափով միշտ էլ կատարում է նաև անալիտիկ (վերլուծական) ֆունկցիաներ, վորոնց արդյունքներն արտահայտվում են ուսումնասիրվող հանրագումարի ներքին կառուցվածքի մասին հասկացողություն ավող աղյուսակների ձևով:

Ստատիստիկական նյութի ամփոփման վերլուծական ֆունկցիաներն ամենից շատ յերևան են գալիս այն ժամանակ, յերբ նրա արդյունքներն արտահայտվում են խմբական աղյուսակների ձևով, վորպիսիք ստանալու համար ուսումնասիրվող հանրագումարի բոլոր որյեկտները միացվում են վորակապես միասնակ խմբերում:

Ստատիստիկական դիտումների միջոցով հավաքված նյութը կարող է յենթարկվել Դրագմատեակ խմբավորումների, ընդ վորում, նայած այդ խմբավորումը կատարելու ժամանակ կիրառվող յեզանակներին, կարելի յե սահմանել խմբավորումների յերկու հիմնական տիպեր՝ վորակական և քանակական խմբավորումներ:

Անցնելով խմբավորման այս կամ այն տեսակի եյությանը, ամենից առաջ անհրաժեշտ է մի քանի խոսք ասել դրա տերմինաբանության մասին:

Պետք է նշել, վոր ամեն մի այսպես կոչված քանակական խմբավորում, կամ այլ կերպ ասած՝ հանրագումարի որյեկտների խմբավորում հիմնված է նրա այս կամ այն հատկանիշի մեծության նմանության վրա, և ճանաչողական արժեք է ներկայացնում միայն այն դեպքում, յերբ նրանով դրակերպվում է նույն հանրագումարի որյեկտների մի խմբի վորակական տարբերությունը մյուսից: Այն խմբավորումը, վորը չի հետապնդում այս նպատակը, կլինի լուրջ թվաբանական խմբավորում, կամ ինչպես Վ. Ի. Լենինն է ասում՝ «ստատիստիկական վարժություն»: Այդ պատճառով ճիշտ կատարված քանակական խմբավորումը միաժամանակ հանդիսանում է վորակական խմբավորում: Այդ կապակցությամբ խոսելով ստատիստիկական նյութի խմբավորման մասին, ավելի ճիշտ կլինի առանձին որյեկտների հատկանիշների տարբերության վրա հիմնված խմբավորումը, վորը յենթակա յե չափման (այն ինչ սովորաբար կոչվում է քանակական խմբավորում), հակադրել այնպիսի խմբավորման, վորի հիմքում ընկած է որյեկտների այնպիսի տարբերություն, վորը յենթակա չի չափման (այն ինչ սովորաբար կոչվում է վորակական խմբավորում):

Արդյունաբերական ստատիստիկային հայտնի յեն նյութի յերկու տեսակի խմբավորումներն էլ, ընդ վորում դրանցից ամենից տարածվածը և կարելի յե ասել հիմնական տեսակը՝ հանդիսանում են այսպես կոչված կլասիֆիկացիաներ:

Կլասիֆիկացիայի անվան տակ ընդհանրապես հասկացվում է մեր ուսումնասիրած հանրագումարի բազմազան որյեկտների միացումը՝ վորակապես միաստոր խմբերում. ըստ վորում այդ խմբերը գոյանում են այս կամ այն հատկանիշի այնպիսի նմանության հիման վրա, վորը չի յենթարկվում չափման: Այսպիսով, ամեն մի կլասիֆիկացիա յերենից ներկայացնում է խմբավորման, մասնավորապես այսպես կոչված՝ վորակական խմբավորման մի աղյատեսակություն:

ԿԼԱՍԻՖԻԿԱՑԻԱՆ ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ամեն տեսակի կլասիֆիկացիայի, ինչպես և ընդհանրապես ստատիստիկական նյութերի խմբավորման հիմնական խնդիրը այն է, վոր 51

վորսը սխառմամբ վերածվել սատարստիկական գիտությունների միջոցով համարված նյութեր, դառնալի գիտությունների մեջ ընդգրկված որյեկտների բազմազանություն մեջ նմանություններ: Նյութի այսպիսի սխառմամբ մասնաշաղկապությունն ամենից առաջ վորոշվում է նրանով, վոր առանց մեր ուսումնասիրության հետևանքով կուտակված նյութի սխառմամբ վորման, ընդհանրապես անհնար է վորեւ գիտա-հետազոտական աշխատանք, քանի վոր յուրաքանչյուր գիտական ճանաչողության տարբերիչ հատկանիշն այն է, վոր նա պահանջում է նյութի սխառմամբություն: Միայն ուսումնասիրության ավյալների սխառմամբությունով է, վոր մենք հնարավորություն ենք ստանում մեզ շրջապատող աշխարհի տեղերը բազմազան յերևույթները հասկանալ: Միանգամայն հասկանալի է, վոր արդյունաբերական ստատիստիկան եւ վորպես գիտական գործունեության առանձին ճյուղ, չի կարող միայն առանց իր կողմից հաճաքած ավյալների այդպիսի սխառմամբություն:

Արդյունաբերական ստատիստիկայի նյութերի կլասիֆիկացիայի կոնկրետ խնդիրն այն է, վոր դիտումների բազմապիսի միավորներն առաջին հերթին համախմբվում են արտադրական ձեռնարկությունների միատարր խմբերում: Այդ բանը մեզ հնարավորություն է տալիս մեր ամբողջ ուշադրությունը կենտրոնացնելու թիվով համեմատաբար քիչ միատարր ձևակառույթների վրա, վորի շնորհիվ հեշտում է այն որին աշխատությունների հայտնաբերումը, վորոնք կարող եյն մեր գիտման մեջ առնված առանձին որյեկտների կոնկրետ բազմազանություն մեջ անհասանելի մնալ:

Մյուս կազմից արդյունաբերական միավորները բազմազանություններ վորոշ սխառմի բերելով միայն մենք ստանում ենք արդյունաբերության ներքին կառուցվածքի, նրա առանձին բաղկացուցիչ մասերի ու դրանց փոխադարձ կապի բոլորովն այլ պատկեր, վորն առանձնապես կարևոր է ժողովրդաանտեսական պրոցեսների պլանային կարգավորման պայմաններում:

Կլասիֆիկացիան իրեն այդպիսի խնդիրներ առաջադրելով, նա իրենից ներկայացնում է մեր ուսումնասիրած յերևույթների վորոշում տեղի ունեցող բազմազանության ընդհանրացման այնպիսի տարրական յեղանակ, վորը վոչ միայն դյուրացնում է ավյալ յերևույթների վորոշում ճանաչումն, այլ և նրա վրա ունենալիք ստեղծագործական ներգործությունը:

Քանի վոր կլասիֆիկացիայի խնդիրն է սխառմամբություն վրձակագրական դիտումներից ստացված նյութերը, ուստի ակնհայտ է, վոր նրա այդ նշանակությունն ամբողջապես գրեթե զրոյանում է «դիտումների նյութերի մշակման ստադիայում: Սակայն վորոշ հանգամանքների կապակցությամբ նա պրակտիկ հետաքրքրություն է ներկայացնում նաև նյութի անմիջական հավաքման ժամանակ: Մեր կողմից ուսումնասիրվող հանրազգումների շրջանակներում հայտարարելով որյեկտների այդ կամ այն տիպերը, կլասիֆիկացիան հնարավորություն է տալիս այդ

ցետում իսկ զենկ մի շարք հարցեր, վորոնք այդ տիպերից յուրաքանչյուրի համար յուսարանում են մի քանի բնորոշ առանձնահատկությունները: Յենթադրենք, որինակ, վոր մենք ծրագրել ենք կլասիֆիկացիայի պրոցեսում արտադրական ձեռնարկությունները բաժանել զանազան խմբերի, վորոնք միմյանցից տարբերվում են արտադրական պրոցեսների բնույթով: Միանգամայն բնական էլ լինի, յեթե հենց հետադադարյան պրոցեսում առանձին ձեռնարկությունների մոտ զգրվեն այնպիսի հարցեր, վորոնք համապատասխանեն այդ խմբերից յուրաքանչյուրի որյեկտներին առանձնահատկություններին, այսպես, որինակ, քարածխային ձեռնարկությունների առաջ զենկով վորոշ հարցեր, մետաղաձուլական գործարաններին կառավարելիք բոլորովն այլ հարցեր: Այդ իսկ պատճառով էլ միանգամայն ճշմարիտ է Վ. Յե. Վարդաբլի յերբ ասում է, վոր «արդյունաբերական ստատիստիկայի սխառմում արտադրությունների կլասիֆիկացիան նախապես սահմանված կոնստրուկցիա է, վորով պետք է բաշխվեն ուսումնասիրելիք արդյունաբերական (արտադրական — Ք. Ս.) բոլոր ձեռնարկությունները, յենչպես հավաքման ստադիայում, այնպես էլ հավաքվելիք նյութերի սխառմամբումն և ամփոփման ժամանակ»: Մեր քերված բանաձևումի ճշտությունը (բանաձևում, վորը տալիս է կլասիֆիկացիայի նշանակությունը միջ միայն նյութի մշակման, այլ և նրա հավաքման ստադիայում) բղխում է նրանից, վոր ամեն մի ճշտորեն կազմակերպված ստատիստիկական դիտում պետք է նախապես հիմնովին քննարկվի ու ըմբռնվի: Արդեն ստատիստիկական տեղեկությունների հավաքման ստադիայում պետք է հայտնի լինի նյութի հետագա մշակման սխառմի: Հակառակ դեպքում մենք կունենանք վոչ թե դիտական հետադադարյան, այլ նյութերի հավաքում «համեմատյան դեպք», վորը միանգամայն անհամատեղելի է դիտա-հետադադարյան աշխատանքների ճիշտ դրվածքի հետ:

ԿԼԱՍԻՖԻԿԱՑԻԱՆ ԿԱՌԱՐԱՐՈՒՄՆ ԿԱՌԱՐԵ ԶԱՆՈՑՈՂԱՄՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԿՈՆԿՐԵՏ ԲՈՎԱՆԴԱՎՈՐՈՒՄՈՒՄ

Յուրաքանչյուր կլասիֆիկացիա մի ճանաչողական յեղանակ է, վորը հեշտացնում է քննարկվող բազմազան նյութի յուրացումն ու ըմբռնումը: Այստեղից պարզ է, վոր կլասիֆիկացիայի այս կամ այն կառուցումը միշտ էլ վորոշվում է այն ճանաչողական խնդիրների կոնկրետ բովանդակությամբ, վորոնք մեր առաջ ծառանում են այս կամ այն յերևույթի ուսումնասիրության պրոցեսում:

Այս դրույթի ճշտությունը կարելի է համոզվել կյանքի վորեւ բնագավառի յիրևույթների որինքով, վորոնց ուսումնասիրելիս կլասիֆիկացիան կիրառելի է Վյապես, որինակ, ուսումնասիրելով բուսական աշխարհը՝ առանձին բույսերի կողմից մարդուն տված ոգուտի տեսակետից, մենք բոլոր բույսերն ըստ այդ հատկանիշի կբաժանենք տարբեր խմբերի (առանձնացնելով մենդատու, թխատու, յուղատու, բուժական բույսեր և այլն): Հետաքրքրվելով բույսերի տարրատեսակու-

թյամբ ըստ ծագելի կազմութեան, մենք պատեց կրթականն ընտանիք-
ները (խաչածէն ծողիտը, բարդ ծողիտը և այլն)։ Հետաքրքրելով
բռնակների ուղիորդագրական տեղադրութեամբ, մենք դրանց կրթականներ
ըստ կլիմայական գոտիների և ուլի։ Արտադրական ձեռնարկութեան
ները բազմազանութեանը նույնպէս կարող է ընդհանրացվել զոնազան
միտաւորը խմբերում, նախած մեր հետազոտութեան նպատակին և այն
զրակատիկ նպատակներին, հոնուն վերանց սկսվում է այդ հետազոտու-
թեանը։ Այսպէս, օրինակ, արդյունաբերութեան տեխնիկական դեկա-
ւաբութեան օրգանների հոմար, արդյունաբերութեանը տեխնոլոգիա-
կան պրոցեսների տեսակետից պետք է բաշխվի նման խմբերի։ Այնու-
տանքի պաշտպանութեան օրգանների տեսակետից հետաքրքրութեան
և ներկայացնում բանվորների առողջութեան վրա ձեռնարկութեան
խմբավորման ունեցած ազդեցութեանը։ Մյուս օրգանների հոմար (ա-
պահովագրական և այլն) կարող է պրակտիկ հետաքրքրութեան ներ-
կայացնել մի վորեն այլ խմբավորում և այլն։

Մեր այս առաջնորդից ամենից առաջ հետևում է այն, վոր նախած
մեր առաջ ծառայած ճանաչողական խնդիրների կոնկրետ բովանդո-
ղութեանը, նախած նախադասում կոնկրետ խնդիրներին, կարող են սեղծ-
վել առընթերցանութեան մի քանի զանազան կլասիֆիկացիաներ։ Մյուս
կողմից, քանի վոր արդյունաբերական ստատիստիկայի աշխատանքը
չի կարող ինքնանպատակ լինել և քանի վոր նրա (արդ. ստատիստի-
կան) ճանաչողական և հաշվարկային խնդիրների բնույթն ու կոնկրետ
բովանդակութեանը պետք է դրաշխեմ տնտեսական քաղաքականու-
թեան դրույթներով, ուստի առընթերցանութեան կլասիֆիկացիաների ան-
միջական բնույթն ու նրանց կոնկրետ բովանդակությունը չեն կարող լի-
նել մեզնեման և անփոփոխ, այլ բնդիականակը՝ պետք է նախապա-
տաստենք սկսել մոմենտի պահանջներին։

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՃՅՈՒՂԱՅԻՆ ԿԼԱՍԻՖԻԿԱՑԻԱՆ

Արդյունաբերական ստատիստիկայի մեջ կիրառվող զանազան
կլասիֆիկացիաներից ամենից մեծ տարածումն ունի տարբեր արտա-
դրական ձեռնարկութեանների կլասիֆիկացիան՝ ըստ արդյունաբերու-
թեան ճյուղերի։

Անցնելով կլասիֆիկացիայի այդ տեսակի հետ ծանոթանալուն,
նախապէս կանգ առնենք ամեն մի կլասիֆիկացիայի կառուցման ժամա-
նակ ծագող հիմնական հարցերի վրա։

Ինչպէս յերևում է նենց մեր կողմից քննարկվող կլասիֆիկացիա-
յի անունից, նրա էությունը կայանում է զանազան առաջադրական ձեռ-
նարկութեաններ միաստը խմբելում միացնելու մեջ, խմբել, վորակ
կաշվում են առընթերցանութեան նյութը։ Առաջին հարցը, վորը բղիւում
է ճյուղային կլասիֆիկացիային ծանոթանալիս, այն է, թե ինչ բան
է արդյունաբերութեան ճյուղը, կամ այլ կերպ ասած՝ ինչ հատկանի-
քն է թնորոշվում արտադրական ձեռնարկութեանների այն զոնազան

խմբերի միատարրութեանը, վորոնք հայտնի չեն արդյունաբերութեան
ճյուղեր անունով։

Այն հատկանիշի հարցը, վորի հիման վրա կազմվում են արդյու-
նաբերութեան զանազան ճյուղային խմբերը, չափից քուրս բարդ հարց
է։ Այդ հարցը լուծելիս հնարավոր է ոգովել հետևել յերեք հատկա-
նիշներից մեկն ու մեկով. դրանք են՝ 1. կամ զանազան ձեռնարկու-
թեանների կողմից վերամշակվող հումքի միատարրութեանը, 2. վերա-
մշակվող պրոդուկտի ոգտագործման նպատակի միատարրութեանը, 3.
կամ թե տեխնոլոգիական պրոցեսի միատարրութեանը։

Տեսականորեն դատելով, ճյուղային խմբերը կառուցելիս կարծե-
թե պետք էր ընտրել այդ յերեք հատկանիշներից մեկը և այդ հատկա-
նիշի հիման վրա էլ կառուցել բոլոր ճյուղային խմբերը։ Երկրորդին
խմբերի կառուցման այսպիսի յեղանակ կիրառելով, մենք, անհնայտի
յե, մեզ համար պետք էր ելական համարելինք միայն ընդունված
հատկանիշը, իսկ մնացածը պետք է վոր համարելինք վոր ելական, Ո-
րինակ՝ ընտրելով վերամշակվող հումքի միատարրութեանը, մենք կա-
ծեն թե պետք է մեր աչքերը վակելինք այն յերևույթի հանդեպ, վոր
միևնույն հումքից պատրաստվում է միանգամայն տարբեր նպատակ
ու նշանակութեան ունեցող պրոդուկտ և վոր այդ հումքի վերամշակ-
ման պրոցեսն առանձին գեղերում կլինի միանգամայն տարբեր։ Կամ
ընդհակառակը, ընտրելով պրոդուկտի նպատակային գործադրութեան
միատարրութեան հատկանիշը, մենք պետք է արտադրական ձեռնար-
նարկութեանները բաշխելինք այնպէս, վոր նրանք միատարր լինելին
իրենց այդ հատկանիշներով, մոռանալով, վոր միևնույն նպատակին
ծառայող պրոդուկտները շատ հաճախ պատրաստվում են տարբեր տե-
սակի հումքից և տարբեր յեղանակներով։

Սակայն դժվար չէ համոզվել, վոր արդյունաբերութեան կլասի-
ֆիկացիան ըստ ճյուղերի կառուցելը, վոր գոյացել է վերը նշված հաս-
կանիշներից մեկն ու մեկի հիման վրա, չի լուծում արտադրական ձեռ-
նարկութեանները վորակապես միատարր խմբերում միացնելու խնդիրը։

Յենթադրենք, որինակ, վոր ընտրելով վերամշակվող հումքի միա-
տարրութեան հատկանիշը, մենք առանձնացրել ենք ձեռնարկութեաննե-
րի այն խմբերը, վորոնք վորպէս հումք ոգտագործում են փայտը, մե-
տաղը և ըստ այդ հատկանիշի համախմբելով ձեռնարկութեանները,
մենք դեմ կառնենք, որինակ, այնպիսի գեղերի, յերեք փայտը վոր-
պէս հումք ծառայում է կահույքի արտադրութեան, վազոնների արտա-
դրութեան ու ցելյուլոզի արտադրութեան համար։ Բայց անհնայտի
յե, վոր յեթե մենք միևնույն խմբին գասենք և՛ կահույքի ֆաբրիկան,
և՛ վագոնաշինարարական գործարանը, և՛ ցելյուլոզի ֆաբրիկան, ապա
մենք դարձյալ լուծած չենք լինի վարակապես միատարր խմբի գո-
յացման խնդիրը։ Երկրորդ նույնպէս աննպատակահարմար կլիներ մի
խմբի մեջ միացնել ժամացույցների գործարանը և չոգեկապերի պատ-
րաստման գործարանը, յենելով լիկ այն բանից, վոր յերևումն էլ մի-
տաղից իրեր են պատրաստում։

Ճյուղային խմբերի գոյացման խնդիրը չի լուծում նաև մյուս հատկանիշը — պրոդուկտի նպատակային գործադրութեան հատկանիշը: Յենթադրենք, վոր այդ հատկանիշը ընդունելով վորպես խմբավորման հիմք, մենք ցանկանայինք առանձնացնել հազուստ, վտանաման ու ճաշարանի սարքավորանք պատրաստող ձեռնարկութեանները խումբը: Ոգտվելով այդ հատկանիշներից, մենք պետք է դեմ առնեյինք մի անհրաժեշտութեան. մենք պետք է այդ խմբերից առաջինին դասեյինք վորակապես տարբեր ձեռնարկութեանները շարքը, ինչպես որինակ՝ կարի, տրիկոտաժի ու գալանտերեայի ֆարքիկաները, իսկ յերկրորդին՝ վտանամանի ֆարքիկան, թաղիքի, ներքնակների ու վտանամանների գործարանը և ուտինն իրերի գործարանը, յերրորդին պետք է դասեյինք ապակու, ֆարֆորի և մետաղյա իրերի գործարանների շարքը:

Վերջնապես յերրորդ հատկանիշը՝ տեխնոլոգիական պրոցեսների միատարրութեանը նույնպես չի լուծում ճյուղային խմբերի գոյացման հարցը, քանի վոր մի կողմից, ըստ եյութեան այնպիսի միատարր տեխնոլոգիական պրոցեսների, ինչպես որինակ՝ ձուլումը, կիրառվում է ամենաբազմապիսի արտադրութեաններում (ապակու ձուլում, մետաղի ձուլում) և մյուս կողմից՝ միևնույն արտադրութեան պրոցեսներում կիրառվում են ամենաբազմապիսի պրոցեսներ (որինակ, սուպերֆոսֆատի պատրաստումը պահանջում է և՛ ֆոսֆորիտների մեխանիկական մանրացում, և՛ նրանց քիմիական մշակում. մետաղների մշակումը պահանջում է թե՛ տերմիկական և թե՛ մեխանիկական մշակում և այլն):

Վերևում մեր ամբողջ ասածից հետևում է, վոր նշված հատկանիշներից և վոր մեկը պիտանի չի վորպես միակ հատկանիշը՝ բոլոր ճյուղային խմբերի կառուցման համար: Այստեղից սակայն բոլորովին չի հետևում, վոր դրանք բոլորը միասին վերցրած անպետք են այդ նպատակի համար: Ճյուղային կլասիֆիկացիայի կառուցման պրակտիկան այս դրութեանից դուրս գալու հաջող յեղքը դառնում է նրանում, վոր նա ոգտվում է բոլոր յերեք հատկանիշներից, յուրաքանչյուր առանձին դեպքում նրանցից ոգտագործելով այնպիսինը, վորը տվյալ դեպքում ավելի պիտանի չի վորակապիս միատարր խմբի գոյացման համար: Այս ճանապարհով ստատիստիկական աշխատանքների պրակտիկան ըստ եյութեան, այսպիսի սոսաձ վեյանքի հետևից է գնում, համար խմբելով այն, ինչ վոր նման է հենց իր բնույթով:

ԱՐԴՅՈՒՆԱՔԵՐՈՒԹՅՈՒՆ ԶՅՈՒՂԵՐԸ ԱՐԴՅՈՒՆԱՔԵՐՈՒԹՅՈՒՆ ԶՅՈՒՂԵՐԻ ԱՆՎԱՆԱԿԱՐԴՈՒԹՅՈՒՆԸ

Յենթեով ճյուղային խմբերը վորոշող հատկանիշների մասին վերը մեր բոլոր ասածներից, մենք կարող ենք արդյունաբերութեան ճյուղ հասկացողութեանը հետեյալ սահմանումը տալ. արդյունաբերութեան ճյուղ ասելով հասկացվում է արտադրական ձեռնարկաբայութեան պայմանի խումբը, վորը միացար է իր ներսում, կամ վերամշակվող հումքի սեռակեցից, կամ բաց բազմվող պրոդուկտի մպատկային գործադրութեան սեռակեցից, կամ բն վերջինիս պատրաստման սխեմոլոգիական պրոցեսի սեռակեցից:

Վերը բերված սահմանումի կապակցութեամբ, տեսլին մոմենտը, վորի վրա անհրաժեշտ է հանդ առնել, հանգում է նրան, վոր արդյունաբերութեան ճյուղը մենք բնորոշում ենք վորպես արտադրական ձեռնարկաբայութեան մի խումբ: Այլ կերպ ասած՝ ճյուղային կլասիֆիկացիայի ժամանակ խմբավորման միավորը մենք համարում ենք արտադրական ձեռնարկութեանը վորպես միասնական ամբողջութեան: Այս հանգամանքը լիովին համապատասխանում է նրան, ինչ վոր մենք տեսանք մեր դասընթացի նախորդ դիսում. այսինքն, վոր արտադրական ձեռնարկութեանը դիտման հիմնական միավորն է յիտումներն իրականացնելու պրոցեսում մենք արդյունաբերութեանը բաժանում ենք տոանձին միավորների, իսկ խմբավորման պրոցեսում մենք այդ միավորները միացնում ենք միասարը խմբերում: Սակայն այս հանգամանքից բղխում է մի ուրիշ պրակտիկ հետևութեան. քանի վոր մենք արդյունաբերութեան այս կամ այն ճյուղին դասում ենք արտադրական ձեռնարկութեանը ամբողջութեամբ վերցրած, ապա ակնհայտի չե, վոր այն դեպքերում, յերբ միևնույն ձեռնարկութեան շրջանակներում մենք հանդիպում ենք նրա մասերի արտաբերութեան (տվյալ ճյուղի գոյացման համար ընդունված հատկանիշի տեսակետից), մենք ստիպված ենք լինում ամբողջ ձեռնարկութեան վիճակը տնորինել. հաջվի չառնելով նրա ներքին վորակական վոչ միատարրութեանը:

Թաուր կազմութեան ունեցող ձեռնարկութեանները ճյուղային այս կամ այն խմբին դասելու հարցին մենք կանգնադառնանք մի փոքր հետո. նախապես կանգ առնենք ճյուղային կլասիֆիկացիայի եյութեան հետ կապված մի քանի վորոշ հարցերի վրա:

Քանի վոր ճյուղային խմբերի կազմութեան ժամանակ վորպես հիմք կարող է ընդունվել նշված յերեք հատկանիշներից վորևե մեկը, ուստի չի բացառված այն հնարավորութեանը, վոր արաբեր ճյուղային խմբերի ցուցակներ կազմող զանազան անձինք յուրաքանչյուր առանձին կոնկրետ դեպքում կոգտվեն տարբեր հատկանիշներով: Այստեղից կարող են ծագել տարբեր կլասիֆիկացիաներ: Մյուս կողմից՝ նայած այս կամ այն կլասիֆիկատորի անձնական ճաշակին՝ ու նրա ձգտումներին, ճյուղային խմբերի անմիջական թիվը նույնպես կարող է զանազան լինել: Թե՛ այս և թե՛ մյուս յերևույթը տեղի է գտել տարբեր ճյուղային կլասիֆիկացիաներ կառուցելիս: Չխոսելով արդեն կլասիֆիկացիաների այն տարբերութեան մասին, վոր տեղի է ունեցել արդյունաբերական ստատիստիկայի աշխատանքներում՝ միջադպիս մասշտաբով, նույնիսկ մի յերկրի սահմաններում և մասնավորապես իՍՏԱՆ-ում, դժբախտաբար՝ վոչ միայն տարբեր ժամանակներում, այլև միևնույն ժամանակում մենք հանդիպում ենք տարբեր կլասիֆիկացիաների:

Նշենք թեկուզ այն, վոր մի քանի ամբիսների ընթացքում, սրինակ, մեր գերատեսչական ստատիստիկական (ժողտնտգրութեան) պետական (կենտրոնական) պլանների կառուցման և ստատիստիկական հաշվետվութեան նյութերի խմբավորման ժամանակ տարբեր կլասիֆիկացիաների:

ցիաներ եյին կիրառում: Դեռ ավելին՝ տեղի ունեցին նաև այնպիսի դեպքեր, յերբ, որինակ, արդյունաբերութեան ստուգիչ թվերն ըստ արտադրութեան վորոշվում եյին այլ կլասիֆիկացիայով, իսկ աշխատանքի վերաբերյալ ստուգիչ թվերն՝ այլ կլասիֆիկացիայով:

Դժվար թե կարելի զգացվի յերկար կանգ առնել այն բանի վրա, թե ինչ հետևանք է տալիս ճշողային կլասիֆիկացիաների տարբերութեանը: Միանգամայն պարզ է, վոր այդ տարբերութեանը տանում է դեպի ըստ առանձին խմբերի կառուցված թվական ավյալների համադրութեան և համեմատութեան անհնարինութեան: Այսպիսով անհնարին է լինում համեմատել հաշվետվական տվյալները պլաններին հետ, կամ համեմատել տարբեր աղբյուրներից ու տարբեր ժամանակների համար վերցրած տվյալները և այլն: Այստեղից էլ բխում է միասնական, ամբողջ յերկրի սահմաններում բոլոր որդանների համար պարտադիր ինչպես պլանային, այնպես էլ ստատիստիկական կլասիֆիկացիայի ստեղծման անհրաժեշտութեանը և թույլ է տալիս համեմատել անցյալ ժամանակի տվյալների հետ:

Յերկրորդ վտանգը, վորի մասին մենք վերևում հիշատակեցինք, դա ճշողային խմբերի ցուցակը կազմելու ժամանակ առաջացող մասնատրման դանդաղութեանն է, վորը կարող է ցուցադրվել թեկուզ հետևյալ որինակով. միասնական կլասիֆիկացիան, վորը ներկայումս ընդունված է պլանային և ստատիստիկական աշխատանքների համար, նախատեսում է ընդամենը 126 խումբ, այն ինչ կենտովիճվարի կողմից 1920 թ (այդ նպատակի համար ստեղծված հատուկ հանձնաժողովի միջոցով) մշակված կլասիֆիկացիան նախատեսում էր 613 խումբ:

Կանգ առնելով ճշողային խմբերի մասնատրման աստիճանի վրա, չի կարելի չհամաձայնվել Վ. Յե. Վարդարի այն դիտողութեանների հետ, վոր կլասիֆիկացիայի ավելորդ մանրույնն նրա առավելութեանը չի, այլ ընդհակառակը՝ պակասութեանն է. «Այդ կլասիֆիկացիոն ինֆլացիայի միակ միջխորութեանը և փրկութեան խարխիլը — սրամտութեն նկատում է Վ. Յե. Վարդարը — ծառայում է այն հանդամանքը, վոր արտադրութեանների հիմնական ստորաբաժանումների չափից դուրս ուղղումը՝ հիմնարկների տեղեկութեանները հաշվելիս ու ամփոփելիս, կանգնեցնում է այնպիսի դժվարութեանների առաջ, վոր հաշվառման այդ դժվարութեանների հաղթահարումը և ստացվող աղյուսակների ու ամփոփումների հսկայական չափերը (վորին դեմ է առնում նյութերի մշակման գրոցներ և գործառնութեանների պատրաստի արդյունքների տարադրութեանը) պահանջում են խոշոր աշխատանք և դրամական ծախսումներ, վորով վորոշ չափով կանգնեցնում է հետազոտողի մատդրութեանների լայնութեանը*): Կլասիֆիկացիայի մանրումը վոչ միայն չի ոգնում ընդհանրացման ու վերլուծութեան նպատակներին, այլ ճիշդ հակառակը՝ դժվարացնում է նրանց իրականացումը:

*) Վ. Վարդար «Արդյունաբերական ստատիստիկայի հիմունքների ակնարկ»

նացումը, ստեղծելով անընդհանրիկ աղյուսակների կառուցման անհրաժեշտութեանը («ստատիստիկական սալան» յինթակայում 612 տողով):

Ստատիստիկաները վաղուց եյին դիտակցում միասնական կլասիֆիկացիայի ստեղծման անհրաժեշտութեանը: Նույնիսկ փորձեր են յեղել ստեղծելու «միջազգային» միասնական կլասիֆիկացիա, վորի նախադիժը 1892 թ. միջազգային ստատիստիկական կոնգրեսում առաջարկեց ֆրանսիացի ստատիստիկ Բերտելյունը: Կոնգրեսի կողմից հավանութեան դատած, Բերտելյունի առաջարկած կլասիֆիկացիան չհանգավ այն գործնական նպատակին, վոր նա առաջադրել էր իրեն: Յե՛վ այդ ինքնին հասկանալի չէ, քանի վոր վոչ մի այնպիսի կլասիֆիկացիա, վորը հավանութեան ունի գործնականում պիտանի լինելու, չի կարող յեղնել ինչ-վոր վերացական նախադրյալներից, այլ պետք է արտացոլի տարբեր յերկրների պարագաներում և տնտեսական զարգացման տարբեր ետապների պայմանների բազմապիսի իրականութեանը: Առավել ևս ավելորդ է այստեղ յերկար խոսել ներկայումս միջազգային կլասիֆիկացիա կերտելու գործնական անհրաժեշտութեան մասին, յերբ ամբողջ աշխարհը, մեր պրոլետարական հեղափոխութեան ազդեցութեան ներքո, բաժանվել է յերկու թշնամի ճամբարների, վորոնք ունեն միանգամայն տարբեր ու հակադիր սոցիալ-տնտեսական խնդիրներ:

